



The Fiscal Decentralization Initiative  
for Central and Eastern Europe



Վահան Ռաֆիկի Մովսիսյան

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երևան — 2007

ՀՏԴ 336:351/354(479.25)  
ԳՄԴ 65.9(2Հ)29+67.99(2Հ)1  
Մ 917

*Գիրքը հրատարակվել է Ֆիսկալ ապակենտրոնացման նախաձեռնության Բուդապեշտ (OSI/FDI) և ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID/RSC/Budapest) օժանդակությամբ No 194-A-00-03-00106-00 դրամաշնորհի շրջանակներում: Գրքի մեջ տեղ գտած տեսակետները հեղինակին են, որոնք միշտ չէ, որ համընկնում են Բաց հասարակության ինստիտուտի կամ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության կարծիքներին:*

Մ 917 Վահան Ռաֆիկի Մովսիսյան  
Ֆինանսական համահարթեցման մեխանիզմի զարգացումը  
Հայաստանում - Եր. Նոյյան տապան, 2007, 126 էջ:

*Գրքում ներառված է ֆինանսական համահարթեցման արդի համակարգի նկարագիրը՝ թերություններն ու բացթողումները: Ներկայացված են առաջարկվող ֆինանսական համահարթեցման նոր համակարգի հայեցակարգը, համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման մեթոդաբանությունը ինչպես նաև ֆինանսական համահարթեցման մասին ՀՀ օրենքի նախագիծը:*

*Գիրքը նախատեսված է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ֆինանսական քաղաքականության մշակողների և որոշումներ ընդունողների, տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների, ինչպես նաև ֆինանսական համահարթեցման խնդիրներով հետաքրքրվող լայն հասարակության համար:*

6050102040  
Մ \_\_\_\_\_ 2007թ.  
804(01)2007

ԳՄԴ 65.9(2Հ)29+67.99(2Հ)1

© Վահան Մովսիսյան  
© Համայնքների ֆինանսիստների միավորում

ISBN 978-99941-44-53-2

# Բովանդակություն

<b>ԱՌԱՋԱԲԱՆ</b>	4
<b>Հայաստանի ֆինանսական համահարթեցման համակարգը</b>	6
1. Ֆինանսական համահարթեցման ներկա վիճակը	6
2. Գործող համակարգի առավելությունները	8
3. Գործող համակարգի թերությունները	8
4. Ֆինանսական համահարթեցման միջազգային փորձը	9
5. Ֆինանսական համահարթեցման նոր համակարգի սկզբունքները	9
<b>Ֆինանսական համահարթեցման նոր մոդելի մեթոդաբանությունը</b>	11
1. Ներածություն	11
2. Մեթոդաբանության մեջ օգտագործվող հիմնական հասկացություններն ու սահմանումները	11
3. Համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի հաշվարկը	11
4. Համայնքի եկամտային ունակության կարգավորիչ գործակցի հաշվարկը	12
5. Համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի հաշվարկը	13
5.1. Ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի կազմը (տեսակները) և հաշվարկման կարգը	14
5.2. Ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի տեսակարար կշռի (Կ) հաշվարկման կարգը	17
5.3. Համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի արժեքը	27
6. ՀՀ պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով համայնքներին տրվող դոտացիայի բաշխման կարգը	27
6.1. Դոտացիաների բաշխումը՝ ըստ համայնքի մասշտաբի գործակցի	28
6.2. Դոտացիաների բաշխումը՝ ըստ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի	31
Հավելված 1: ՀՀ համայնքների 2003-2005թթ. – ի վարչական բյուջեի փաստացի ծախսերն ըստ գործառնական դասակարգման	37
Հավելված 2: Ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի հիմնավորումները	38
Հավելված 3: Դոտացիաների բաշխման մեթոդաբանության հիմնավորումներ և հաշվարկներ ըստ համայնքի մասշտաբի գործակցի	47
3.1 Պարտադիր լիազորությունների նվազագույն ծախսերի հաշվարկը	47
3.2 Համայնքային բյուջեների մեջ համահարթեցման դոտացիաների միջին տեսակարար կշռի հաշվարկը	49
3.3 Մասշտաբի գործակցի սահմանային մակարդակի որոշման հիմնավորումներ	50
Հավելված 4: Համահարթեցման սահմանային մակարդակի և «բ» գործոնով դոտացիա ստացող համայնքների թվի կապը	51
<b>Նախագիծ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ</b>	55

## ԱՌԱՋԱԲԱՆ

Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման կարևոր պայմաններից մեկը համայնքների ապահովվածությունն է համապատասխան ֆինանսական ռեսուրսներով:

Այս պարագայում առանձնահատուկ դերակատարություն ունեն պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները:

Ֆինանսական համահարթեցումը լայն կիրառություն է գտել բազմաթիվ երկրներում, սակայն դրա հաշվարկման յուրահատկությունները տարբեր երկրներում տարբեր են:

1998թ-ից սկսած Հայաստանի Հանրապետությունում գործում է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը, որը սկզբում քիչ թե շատ համապատասխանում էր նորաստեղծ տեղական ինքնակառավարման համակարգի պահանջներին, սակայն զարգացումների ներկա փուլում այն լուրջ լրամշակման և վերափոխման կարիք ունի: Մասնավորապես, միայն համայնքների եկամտային ունակությունների վրա հիմնվելը և նրանց ծախսային յուրահատկությունների անտեսումը այդ օրենքի առանցքային թերություններից մեկն է:

Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ), կարևորելով ֆինանսական համահարթեցման համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը, նախաձեռնեց ծրագրի մի առաջարկ, որի նպատակն էր մշակել ֆինանսական համահարթեցման նոր մոդել: Այս նախաձեռնությունը ստացավ ծրագրի տեսք Բուդապեշտի «Ֆիսկալ ապակենտրոնացման նախաձեռնության»՝ (OSI/FDI) և ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID/RSC/Budapest) օժանդակությամբ ֆինանսավորված դրամաշնորհի շրջանակներում:

Ծրագրի շրջանակներում ձևավորվեց համակարգող խորհուրդ, որտեղ ներկայացված էին կենտրոնական կառավարության (ՀՀ Տարածքային կառավարման ու ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություններ), Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների (ՄԱԶԾ, Համաշխարհային բանկ, Բաց հասարակության ինստիտուտ, ԱՄՆՄԶԳ և այլն) ինչպես նաև ՀՖՄ ներկայացուցիչներ:

Համակարգող խորհուրդը ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում գործուն մասնագիտական աջակցություն է ցուցաբերել, ինչը ծրագրի հաջող իրականացման հիմնական երաշխիքներից մեկն է:

Անհրաժեշտ է նշել, որ համահարթեցման նոր համակարգի մշակումը ենթադրում էր միջազգային փորձի հանգամանալից ուսումնասիրություն: Այդ իսկ պատճառով, որպես ծրագրի արտաքին փորձագետ, ընտրվել է հանրային ֆինանսների ոլորտի հայտնի կենտրոններից մեկի՝ Մոսկվայի «Ֆիսկալ քաղաքականության կենտրոնի» աշխատակից Օլգա Վորոնցովան, ում մասնագիտական խորհրդատվությունը այս ծրագրում խիստ գնահատելի է:

Ծրագրի շրջանակներում ձևավորված փորձագիտական խումբը ներկայացված էր հետևյալ մասնագետներով՝ **Արտյուշա Մուրադյան**, Սկրտիչ (Սոս) Գիմիշյան, Դավիթ Թումանյան, Էդգար Ղազարյան, Սեյրան Մարկոսյան, Ռոբերտ Ներսիսյան և Կարեն Հովհաննիսյան:

Աշխատանքները կատարվել են Համայնքների ֆինանսիստների միավորման

Ճախագահ Վահան Մովսիսյանի ընդհանուր ղեկավարությամբ:

Ծրագրի արդյունքում մշակվել են ֆինանսական համահարթեցման մեթոդաբանությունը և ՀՀ ֆինանսական համահարթեցման մասին նոր օրենքի ճախագիծը:

Ըստ տարբեր աղբյուրներից ստացված գնահատականների, ՀՖՄ-ի կողմից մշակված ֆինանսական համահարթեցման մոդելը առաջավոր միջազգային փորձի և Հայաստանի առանձնահատկությունների ներդաշնակ համաձուլում է:

# Հայաստանի ֆինանսական համահարթեցման համակարգը

## 1. Ֆինանսական համահարթեցման ներկա վիճակը

Ֆինանսական համահարթեցումը պետության բյուջետային քաղաքականության կարևորագույն գործառնություններից մեկն է, որի նպատակը տարբեր ֆինանսական կարողություններ ունեցող համայնքների միջև առկա բևեռացման մեղմացումն է, ինչպես նաև համայնքների ֆինանսական կարողությունների ամրապնդումն ու զարգացումը: Համահարթեցման սկզբունքով է կարգավորվում կառավարման տարբեր մակարդակների միջև ֆիսկալ քաղաքականության իրականացման մի մասը: Պետությունը (կենտրոնական իշխանությունը) օրենքով սահմանված կարգով ֆինանսական թույլ կարողություններ ունեցող համայնքներին տրամադրում է որոշ ֆինանսական միջոցներ, որոնք համայնքը ծախսում է օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունում համայնքների բյուջեներին տրամադրվող տրանսֆերտները երեքն են՝ համահարթեցման դոտացիաներ, սուբվենցիաներ և այլ դոտացիաներ: Համահարթեցման դոտացիաները տրվում են «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով, դրանք չունեն կոնկրետ ծախսման ուղղություններ, ուղղակի լրացնում են վարչական բյուջեի մուտքերը: Սուբվենցիաները ընթացիկ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ են, որոնց տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը, դրանք եզակի բնույթ են կրում և չեն զուգարկում իրենց կազմում պաշտոնական տրանսֆերտների մեջ (միջինը՝ 0-3% 1997-2004թթ.):

Պետական բյուջեից համայնքներին տրվող դոտացիաների գումարի նվազագույն չափը սահմանված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (հոդված 58), ըստ որի տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի (պետական բյուջե, համայնքների բյուջեների հանրագումար, սոցիալական ապահովագրության բյուջե) փաստացի եկամուտների 4%-ից, որը ըստ համայնքների հաստատվում է յուրաքանչյուր տարի «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով:

Դոտացիաների բաշխումը ըստ համայնքների իրականացվում է օրենքով սահմանված հետևյալ կարգով՝ նախօրոք համայնքները տարանջատելով 2 խմբի.

ա) 300-ից ոչ ավելի բնակչություն ունեցողներ,

բ) 300-ից ավելի բնակչություն ունեցողներ:

300-ից ոչ ավելի բնակչություն ունեցող համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը չպետք է պակաս լինի նախորդ բյուջետային տարում եկամտահարկի, հողի հարկի, գույքահարկի («ա» գործոն) փաստացի մուտքերի 25% -ի և եկամտահարկի փաստացի մուտքերի ընդհանուր գումարի 10%-ի («բ» գործոն) հանրագումարից, որ ըստ համայնքների բաշխվում է

հավասարաչափ (օրինակ՝ 2003-2006թթ.-ին յուրաքանչյուր համայնքին 1500 հազար դրամ):

300-ից ավելի բնակչություն ունեցող առանձին համայնքների դոտացիաների գումարի չափը որոշվում է՝ հիմք ընդունելով վերջիններիս տնտեսական վիճակը բնութագրող հետևյալ գործոնները.

1. Համայնքի բնակչության մեկ շնչին բեժին ընկնող հողի հարկը և գույքահարկի հաշվարկային մակարդակը («ա» գործոն)՝ հաշվարկման հիմք ընդունելով գույքահարկի և հողի հարկի հաշվառումը վարող ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացված տվյալ տարվան նախորդող 2-րդ բյուջետային տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալների հիման վրա հաշվարկված համայնքների բյուջեների համապատասխան ցուցանիշները:

2. Համայնքի բնակչության թիվը («բ» գործոն), որի համար հիմք է ընդունվում ՀՀ պետական վիճակագրական մարմինների կողմից ներկայացված նախորդ բյուջետային տարվա հունվարի 1-ի դրությամբ հանրապետության մշտական բնակչության թիվն ըստ համայնքների:

«ա» գործոնով դոտացիա է նախատեսվում այն համայնքներին, որոնց մեկ շնչին բաժին ընկնող հողի հարկը և գույքահարկի գծով եկամտի միջին մակարդակը ցածր է հանրապետության բնակչության մեկ շնչին բաժին ընկնող հողի հարկի գույքահարկի և «ա» գործոնով համայնքներին նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարի միջին եկամտի սահմանային մակարդակից՝ հետևյալ բանաձևով՝

$$Ա=(U-Հ) \times \text{Բ} \times \text{Գ},$$

որտեղ Ա-ն «ա» գործոնով նախատեսված դոտացիայի գումարն է,

U-ն հանրապետության մեկ շնչին ընկնող միջին եկամտի (հողի հարկի, գույքահարկի, «ա» գործոնով դոտացիայի ընդհանուր գումարի միջինը) սահմանային մակարդակն է, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U=[\text{Դ}+\Sigma(\text{Տ}+\text{Պ})] / (\Sigma \text{Բ}),$$

որտեղ Դ-ն դոտացիայի ընդհանուր գումարն է,

Տ-ն տվյալ համայնքի հողի հարկի հաշվարկային ցուցանիշն է,

Պ-ն տվյալ համայնքի բյուջեի գույքահարկի հաշվարկային ցուցանիշն է,

Բ-ն տվյալ համայնքի բնակչության թիվն է,

Հ-ն տվյալ համայնքի մեկ շնչին բաժին ընկող միջին եկամտի (հողի հարկից և գույքահարկից) մակարդակն է, որը ցածր է հանրապետական մեկ շնչին բաժին ընկող միջին եկամտի («U»-ի) սահմանային մակարդակից, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Հ= (\text{Տ}+\text{Պ}) / \text{Բ},$$

Գ-ն միջին կարգավորիչ գործակից է, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q = T / \sum [(U - Z) \times P]$$

«Բ» գործոնով դոտացիա է տրվում բոլոր համայնքներին՝ դրա համար նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարը հարաբերելով հանրապետության (բացառությամբ 300-ից պակաս բնակչություն ունեցող համայնքերի) բնակչության ընդհանուր թվին, բազմապատկելով տվյալ համայնքի բնակչության թվով:

Այսպիսով, ՀՀ գործող օրենսդրությամբ համայնքների բյուջեներին հատկացվող պաշտոնական տրանսֆերտների (դոտացիաների) տրման սկզբունքը եկամուտների համահարթեցումն է, որը իրագործվում է 3 ձևերով.

1. հաստատագրված ֆինանսական համալրում՝ մինչև 300 բնակիչ ունեցող համայնքներին հավասարաչափ,
2. ֆինանսական ուղղակի համալրում ըստ բնակչության թվաքանակի (300-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների համար՝ օրենքի «բ» գործոնով),
3. հարկային եկամուտների համահարթեցում (300-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների համար՝ օրենքի «ա» գործոնով):

## 2. Գործող համակարգի առավելությունները

Սույն բանաձևով դոտացիայի բաշխումը ունի միայն մեկ առավելություն՝ ապահովել դոտացիայի բաշխման որոշակիությունը և թափանցիկությունը՝ առանց տարծաշրջանների (համայնքների) իրական պահանջների գնահատման: Այսինքն՝ վերոհիշյալ բանաձևը ծառայում է որպես պաշտոնական տրանսֆերտը համայնքների միջև բաշխման քանակական չափանիշ:

## 3. Գործող համակարգի թերությունները

Սույն կարգով (բանաձևով) դոտացիաների բաշխումն ունի հետևյալ հիմնական թերությունները, որոնք հակասում են համահարթեցման սկզբունքին.

1. Ինչ-որ ձևով հաշվի առնելով համայնքների ֆինանսական կարողությունը՝ հաշվի չեն առնվում նրանց ֆինանսական կարիքները:
2. Բանաձևի մեջ ներառված չեն համայնքների իրական պահանջները արտացոլող բաղադրամասերը և ծախսային յուրահատկությունները:
3. Չկա կապ համահարթեցմամբ տրվող դոտացիաների և ՏԻՄ-երի կողմից ծառայությունների մատուցման կատարման մակարդակի միջև:
4. 300-ից պակաս բնակչություն ունեցող համայնքները, որոնցից 36-ը ունեն մինչև 100 բնակիչ, 60-ը՝ մինչև 200 բնակիչ, 97-ը՝ մինչև 300 բնակիչ, դոտացիա են ստանում հավասարաչափ 1500 հ.դ. , մինչդեռ 300-ից ավել բնակիչ ունեցող 78 համայնք ստանում են դրանից պակաս:
5. Հաշվառված և գնահատված չէ համայնքների կարողությունների մեկնարկային ճեղքվաքը՝ ծառայությունների մատուցման համատեքստում:
6. Անկախ կարիքավորության աստիճանից, դոտացիա են ստանում բոլոր համայնքները (օրինակ՝ Երևան քաղաքը ստանում է 4.95 մլրդ դրամ կամ ընդհանուր դոտացիայի մոտավորապես 31%-ը):
7. Չկան ֆինանսական համահարթեցման գնահատման և վերահսկման մեխանիզմներ:



8. Բաշխման ներկա մեթոդը չի խթանում ՏԻՄ-ին՝ բարձրացնելու սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:

#### **4. Ֆինանսական համահարթեցման միջազգային փորձը**

Կայացած տեղական ինքնակառավարման համակարգ ունեցող երկրներն ունեն հարուստ և բազմազան ֆինանսական համահարթեցման իրականացման փորձ: Մեր համար առանձնահատուկ և հետաքրքիր է եվրոպական երկրների փորձն ու կիրառվող մեխանիզմները, որոնք համապատասխանեցված են «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի» պահանջներին:

Եվրոպական երկրների մեծ մասը համահարթեցնում է ոչ միայն եկամուտները, այլ նաև հաշվի է առնում համայնքների ծախսային առանձնահատկությունները: Համահարթեցման դոտացիաները տրամադրվում են ինչպես բոլոր համայնքներին, այնպես էլ միայն միջինից (կամ ինչ-որ մակարդակից) ցածր ֆինանսական ներուժ ունեցողներին: Բոլոր երկրները ձգտում են ֆինանսական համահարթեցումը իրականացնել հնարավորինս պարզ բանաձևի միջոցով, որը ցանկացած համայնքին հնարավորություն կտա ինքնուրույն հաշվարկել դոտացիաները:

Եվրոպական երկրներում ֆինանսական համահարթեցման դոտացիաները հիմնականում հատկացվում են պետական բյուջեի միջոցներից, սակայն կան երկրներ, որտեղ այդ միջոցները համալրվում են առավել հարուստ համայնքների եկամուտներից (բացասական դոտացիա):

Այն երկրներում, որտեղ համայնքների գերակշռող մասի համար տեղական ինքնակառավարման մարմիններին ամրագրված սեփական եկամուտները չեն բավարարում ֆինանսավորել պարտադիր լիազորություններին ուղղված ծախսերը, համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի մի մասը համայնքներին հատկացվում է ուղղակի համամասնային համալրման սկզբունքով:

#### **5. Ֆինանսական համահարթեցման նոր համակարգի սկզբունքները**

Ելնելով Հայաստանի տեղական ինքնակառավարման առանձնահատկություններից և հաշվի առնելով ֆինանսական համահարթեցման նախորդ տարիների փորձը՝ առաջարկվող ֆինանսական համահարթեցման նոր համակարգը կառուցվելու է մի քանի հիմնարար սկզբունքների հիման վրա.

- հաշվի առնելով ՀՀ համայնքների բյուջեներում սեփական եկամուտների ցածր մակարդակը՝ ֆինանսական համահարթեցման համար համայնքներին տրամադրվող դոտացիաները պետք է հատկացվեն պետական բյուջեի միջոցներից՝ բացառելով համայնքներից այդ նպատակի համար միջոցների գանձումը,
- համահարթեցման սկզբունքով համայնքներին հատկացվող դոտացիաների հաշվարկման համար հիմք ընդունել համայնքի հաշվարկային եկամտային ունակությունների և համայնքների պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսային կարիքները,

- ◆ եկամտային ունակության հաշվարկման համար հիմք է հանդիսանում համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող հողի հարկի և գույքահարկի հաշվարկային մակարդակը, համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող մասհանվող եկամուտների (եկամտահարկ, շահութահարկ) և պետական տուրքի փաստացի մակարդակը,
  - ◆ ծախսային կարիքի հաշվարկման համար հիմք են ընդունվում այն գործոնները (ծախսային չափորոշիչներ), որոնք էականորեն ազդում են համայնքի կողմից իրականացվող ծառայությունների (պարտադիր լիազորություններ) իրականացման համար անհրաժեշտ ծախսերի վրա, իսկ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը չափելի է, մատչելի և հավաստի,
  - ◆ ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ծախսային գործակիցների ցուցանիշները և ընդհանուրի մեջ տվյալ գործակցի տեսակարար կշիռը,
- քանի որ ՀՀ –ում կան փոքրաթիվ բնակչությամբ շատ համայնքներ, որոնք նույնիսկ մեկ շնչին ընկնող բյուջետային ապահովության բարձր մակարդակի պայմաններում չունեն բավարար ֆինանսական միջոցներ պարտադիր լիազորությունների կատարման համար, անհրաժեշտ է այդ համայնքներին համահարթեցման դոտացիաների կազմում նախատեսել ֆինանսական ուղղակի համալրման գումարներ,
  - համահարթեցման սկզբունքով համայնքներին հատկացվող միջոցները համարվում են համայնքի բյուջեի եկամուտ, տնօրինվում են համայնքի կողմից ինքնուրույն և չեն կարող ենթադրել որևէ կոնկրետ ծախսի իրականացում,
  - համահարթեցման սկզբունքով տրամադրվող միջոցների հաշվարկը պետք է իրականացվի օրենքով սահմանված բանաձևի միջոցով, իսկ դրանց արդյունքները պետք է կազմեն պետական բյուջեի բաղկացուցիչ մաս և հրապարակվեն,
  - յուրաքանչյուր տարվա համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների հաշվարկը իրականացնելու համար հիմք են ընդունվում հաշվարկվող տարվան նախորդ երկրորդ տարվա համապատասխան ցուցանիշները,
  - համայնքներին հասանելիք համահարթեցման միջոցները համայնքների բյուջեներին պետք է հատկացվեն ամիսը մեկ անգամ՝ հավասար չափաբաժիններով:

# Ֆինանսական համահարթեցման նոր մոդելի մեթոդաբանությունը

## 1. Ներածություն

ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման մեթոդաբանությունը ներառում է՝

- մեթոդաբանության մեջ օգտագործվող հիմնական հասկացություններն ու սահմանումները,
- համայնքների բյուջետային ապահովվածության հաշվարկը,
- համայնքների բյուջեներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների բաշխման հաշվարկը:

## 2. Մեթոդաբանության մեջ օգտագործվող հիմնական հասկացություններն ու սահմանումները

Համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցը տվյալ համայնքի եկամտային ունակության և ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի հարաբերությունն է:

Համայնքի եկամտային ունակության կարգավորիչ գործակիցը տվյալ համայնքի մեկ շնչին ընկնող հարկային եկամուտների և պետական տուրքի հարաբերությունն է հանրապետական նմանատիպ ցուցանիշին:

Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը տվյալ համայնքի՝ մեկ շնչին ընկնող պարտադիր լիազորությունների իրականացմանն ուղղված բյուջետային ծախսերի յուրահատկությունները արտահայտող գործոնների, օրենքով սահմանված ծախսային գործակիցների հանրագումարն է: Համայնքի ծախսային կարիքի գործակիցն արտահայտում է մեկ շնչին ընկնող բյուջետային ծախսերի հնարավոր տարբերությունը միջին հանրապետական նմանատիպ ցուցանիշի նկատմամբ, որն առաջանում է տվյալ համայնքում օրենքով ամրագրված պարտադիր լիազորությունների կատարման ժամանակ:

## 3. Համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի հաշվարկը

Համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԲԱԳ_i = ԵՈՒԳ_i / ԾԿԳ_i, \text{ որտեղ՝}$$

**ԲԱԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցն է,

**ԵՈՒԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակության կարգավորիչ գործակիցն է,

**ԾԿԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցն է:

#### 4. Համայնքի եկամտային ունակության կարգավորիչ գործակիցի հաշվարկը

Համայնքի եկամտային ունակության կարգավորիչ գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԵՈՒԳ}_i = (\text{ԵՈՒ}_i / \text{Բ}_i) / (\text{ԵՈՒ} / \text{Բ}_{ՀՀ}), \text{ որտեղ՝}$$

- ԵՈՒԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակության կարգավորիչ գործակիցն է,  
**ԵՈՒ<sub>i</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակությունն է,  
**Բ<sub>i</sub>** - i-րդ համայնքի բնակչության թիվն է,  
**ԵՈՒ** - բոլոր համայնքների եկամտային ունակության հանրագումարն է ,  
**Բ<sub>ՀՀ</sub>** - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ):

Համայնքի եկամտային ունակությունը հաշվարկվում է տվյալ համայնքի համար, օրենքով սահմանված կարգով համայնքների բյուջեներին ամրագրված եկամուտների ցանկից, աղյուսակ 1-ում բերված եկամտատեսակների հաշվարկային կամ փաստացի ցուցանիշների հանրագումարից: Նույն աղյուսակում նշված է նաև այդ եկամուտների հաշվարկման սկզբունքները և տեղեկատվությունը տրամադրող կառավարման մարմինը:

Համայնքի եկամտային ունակության հաշվարկում օգտագործվող ցուցանիշների կազմը

Աղյուսակ 1

Ցուցանիշ	Եկամտատեսակի ցուցանիշ	Տեղեկությունը տրամադրող մարմին
Հողի հարկ	Համայնքի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային ցուցանիշը յուրաքանչյուր համայնքի գծով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված՝ այդ համայնքի բյուջե հաշվարկվող տրվան նախորդող երկրորդ տարում վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան գումարներն են (առանց հողի հարկի և գույքահարկի գծով հաշվարկվող տրվան նախորդող երկրորդ տարվա տարեսկզբի դրությամբ առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա ընթացքում հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների), ավելացված Հայաստանի	Տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական կառավարման մարմին
Գույքահարկ		

	Հանրապետության օրենքներով և համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների հաշվարկային տարվա բյուջեներում եկամուտների կորուստների գումարները:	
Մասհանվող հարկեր՝ • եկամտահարկ • շահութահարկ	Հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա փաստացի ցուցանիշ	Պետական կառավարման մարմին
Պետական տուրք		
Բնակչության թիվ	Հաշվարկվող տարվան հունվարի 1–ի դրությամբ մշտական բնակչության թիվ	Պետական կառավարման մարմին

#### 4.1. Եկամտի ունակության հաշվարկ

$$ԵՈՒ_i = ՀՀ_i + ԳՀ_i + ՄՀ_i + ՊՏ_i, \text{ որտեղ՝}$$

- ՀՀ<sub>i</sub>** - i-րդ համայնքի հողի հարկն է,  
**ԳՀ<sub>i</sub>** - i-րդ համայնքի գույքի հարկն է,  
**ՄՀ<sub>i</sub>** - i-րդ համայնքի մասհանվող հարկերն են,  
**ՊՏ<sub>i</sub>** - i-րդ համայնքի պետական տուրքն է :

#### 5. Համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի հաշվարկը

Յուրաքանչյուր համայնքի կողմից պարտադիր լիազորությունների իրականացմանն ուղղված ծախսերի հարաբերական տարբերությունները հաշվարկելու համար օգտագործվում է համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակից: Ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցն ուղղակիորեն կապված է՝

- ծախսային գործակիցների քանակից և արժեքից,
- ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի մեջ կոնկրետ ծախսային գործակցի տեսակարար կշռից (բաժնետեսից):

$$\bar{\delta}ԿԳ_i = \sum Կ_n \times \bar{\delta}ԿԳ_n, \text{ որտեղ՝}$$

- ̄ԿԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցն է,

$u_n$  - i-րդ համայնքի n-րդ կարգավորիչ գործակցի տեսակարար կշիռն է,

$\bar{u}_n$  - i-րդ համայնքի n-րդ կարգավորիչ գործակցի արժեքն է:

Ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի հաշվարկման համար հիմք են ընդունվում այն գործոնները (ծախսային չափորոշիչներ), որոնք էականորեն ազդում են համայնքի կողմից իրականացվող կոնկրետ ծախսերի վրա:

### 5.1 Ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի կազմը (տեսակները) և հաշվարկման կարգը

Ավնհայտ է, որ համայնքի կողմից իրականացվող բյուջետային ծախսերն ուղղակիորեն կախված են ոչ միայն համայնքի բնակչության թվաքանակից (բյուջետային ծառայություններից օգտվողներ), այլ նաև այն պայմաններից և յուրահատկություններից, որ ունի համայնքը, և այն գործոններից, որոնք ազդում են բյուջետային ծախսերի իրականացման վրա: Այս իմաստով, գնահատել և հաշվարկել բոլոր հնարավոր այն պայմաններն ու գործոնները, որոնք ազդում են բյուջետային ծախսերի իրականացման վրա, շատ դժվար է և աննպատակահարմար, քանի որ գործոնների քանակի ավելացումից նվազում է մեկ գործոնի ազդեցության աստիճանը, ինչպես նաև՝ հաճախ դրանք դժվար չափելի են ու ոչ հավաստի:

Այս մեթոդաբանության շրջանակներում դիտարկվում են այն ծախսային չափորոշիչները, որոնք առավելագույնս արտահայտում են համայնքների ծախսային յուրահատկությունները, իսկ դրանց վերաբերյալ անհրաժեշտ տվյալները չափելի են, մատչելի և հավաստի:

Ելնելով վերը նշվածից, որպես համայնքի ծախսային կարիքների ընդհանուր կարգավորիչ գործակցի բաղադրիչներ, ընտրվել են միջազգային փորձից հայտնի և Հայաստանի տեղական ինքնակառավարմանը յուրահատուկ հետևյալ վեց ծախսային գործակիցները.

- մասշտաբի գործակից,
- բնակչության տարիքային կառուցվածքի գործակից,
- տրանսպորտային մատչելիության գործակից,
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից,
- համայնքի բարձրադիրության գործակից,
- համայնքային ծառայությունների որակի գործակից:

Բոլոր ծախսային գործակիցների տնտեսագիտական հիմնավորումները բերված են հավելված 2-ում:

#### 5.1.1. Մասշտաբի գործակից (UQ)

$$UQ^i = (0,2 \times F_i + 0,8 \times F_{միջ}) / F_i, \text{ որտեղ՝}$$

$UQ^i$  - i-րդ համայնքի մասշտաբի գործակիցն է,

$F_i$  - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

$F_{միջ}$  - ՀՀ մեկ համայնքում բնակվող բնակչության միջին թիվն է,

$$P_{\text{միջ}} = P_{\text{ՀՀ}} / \text{ՀՀՀ}, \text{ որտեղ՝}$$

- $P_{\text{ՀՀ}}$  - Բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ),  
 $\text{ՀՀՀ}$  - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է:

5.1.2. Բնակչության տարիքային կառուցվածքի գործակից (ՔՏԿԳ)

$$\text{ՔՏԿԳ}^i = (1 + (P_i^{\text{Ե}} + P_i^{\text{Ծ}}) / P_i) / (1 + (P^{\text{Ե}} + P^{\text{Ծ}}) / P_{\text{հհ}}), \text{ որտեղ՝}$$

- $\text{ՔՏԿԳ}^i$  - i-րդ համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցն է,  
 $P_i^{\text{Ե}}$  - i-րդ համայնքի 0-16 տարեկան բնակչության թիվն է,  
 $P_i^{\text{Ծ}}$  - i-րդ համայնքի աշխատունակ տարիքից բարձր բնակչության թիվն է,  
 $P_i$  - i-րդ համայնքի բնակչության թիվն է,  
 $P^{\text{Ե}}$  - ՀՀ 0-16 տարեկան բնակչության թիվն է,  
 $P^{\text{Ծ}}$  - ՀՀ աշխատունակ տարիքից բարձր բնակչության թիվն է,  
 $P_{\text{ՀՀ}}$  - ՀՀ բնակչության թիվն է:

5.1.3. Տրանսպորտային մատչելիության գործակից (ՏՄԳ)

$$\text{ՏՄԳ}^i = 1 + (0,1 \times \sum \text{Մայր} + 0,3 \times \sum \text{Մարդ} + 0,6 \times \sum \text{Տարա}) / (0,1 \times \sum \text{Մայր} + 0,3 \times \sum \text{Մարդ} + 0,6 \times \sum \text{Տարա}), \text{ որտեղ՝}$$

- $\text{ՏՄԳ}^i$  - i-րդ համայնքի տրանսպորտային մատչելիության գործակիցն է,  
 $\sum \text{Մայր}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է մայրաքաղաքից,  
 $\sum \text{Մարդ}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է մարզկենտրոնից,  
 $\sum \text{Տարա}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է նախկին շրջկենտրոնից,  
 $\sum \text{Մայր}$  - համայնքների միջին հեռավորությունն է մայրաքաղաքից,

$$\sum \text{Մայր} = \sum \sum \text{Մայր} / \text{ՀԱՄ ՀՀ} \text{ որտեղ՝}$$

- $\sum \sum \text{Մայր}$  - ՀՀ բոլոր համայնքների՝ մայրաքաղաքից ունեցած հեռավորությունների հանրագումարն է,  
 $\text{ՀԱՄ ՀՀ}$  - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է,  
 $\sum \sum \text{Մարդ}$  - համայնքների միջին հեռավորությունն է մարզկենտրոնից,

- $\sum \text{Ֆ}_i \text{Մարգ} = \sum \text{Ֆ}_i \text{Մարգ} / \text{ՀԱՄ ՅՀ}$  որտեղ՝
- $\sum \text{Ֆ}_i \text{Մարգ}$  - ՀՀ բոլոր համայնքների՝ իրենց մարզի մարզկենտրոնից ունեցած հեռավորությունների հանրագումարն է,
- $\text{ՀԱՄ ՅՀ}$  - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է,
- $\sum \text{Ֆ}_i \text{Տարա}$  - համայնքների միջին հեռավորությունն է իրենց նախկին շրջկենտրոնից,

- $\sum \text{Ֆ}_i \text{Տարա} = \sum \text{Ֆ}_i \text{Տարա} / \text{ՀԱՄ ՅՀ}$  որտեղ՝
- $\sum \text{Ֆ}_i \text{Տարա}$  - ՀՀ բոլոր համայնքների՝ իրենց նախկին շրջկենտրոնից հեռավորությունների հանրագումարն է,
- $\text{ՀԱՄ ՅՀ}$  - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է:

5.1.4. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից (ԲԲԳ)

- $\text{ԲԲԳ}^i = 1 + 0,2(\text{ԲՆԹ}_i - 1)$ , որտեղ՝
- $\text{ԲԲԳ}^i$  - i-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակը հաշվի առնող գործակիցն է,
- $\text{ԲՆԹ}_i$  - i-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի թիվն է:

5.1.5. Համայնքի բարձրադիրության գործակից (ԲԳ)

- $\text{ԲԳ}^i = \text{ԳՅԲ}_i$ , որտեղ՝
- $\text{ԲԳ}^i$  - i-րդ համայնքի բարձրադիրության գործակիցն է:
- $\text{ԳՅԲ}_i$  - i-րդ համայնքի բարձրադիրության գործակցի արժեքն է, որը պայմանավորված է ծովի մակերևույթից համայնքի կենտրոնի բարձրությամբ -  $H_i$ , երբ՝

$H_i$	$\text{ԳՅԲ}_i$
մինչև 1700մ	1
1700-2000մ	1,2
2000մ բարձր	1,4

5.1.6. Համայնքային ծառայությունների որակի գործակից (ԾՈԳ)

- $\text{ԾՈԳ}^i = \text{ԳԾՈ}_i$ , որտեղ՝
- $\text{ԾՈԳ}^i$  - i-րդ համայնքի ծառայությունների որակի գործակիցն է,



**գԾՈ<sub>i</sub>** - i-րդ համայնքի ծառայությունների որակի գործակցի արժեքն է, որը պայմանավորված է համայնքներում տարբեր որակի ծառայությունների մատուցման անհրաժեշտությամբ: Այս առումով համայնքները բաժանվում են երեք պայմանական խմբերի, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկվածներն ունեն ծառայությունների որակի նույն գործակիցը:

Խումբ	Ծառայությունների որակ	գԾՈ <sub>i</sub>	Համայնքներ
I	ընդհանուր	1	բոլոր համայնքները, բացառությամբ II և III խմբում ընդգրկվածների
II	բարձր	1,1	բոլոր քաղաքային (թաղային) համայնքները, բացառությամբ III խմբում ընդգրկվածների
III	արտահայտված բարձր ֆորմատով	1,25	ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը կամ պետական լիազոր մարմինը (ՏԿՆ)

## 5.2. Ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի տեսակարար կշռի (Կ) հաշվարկման կարգը

Ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի տեսակարար կշռի (բաժնեմասի) հաշվարկման համար հիմք են ընդունվում տեղական ինքնակառավարման մարմնին (համայնքի ղեկավարին) օրենքով վերապահված յուրաքանչյուր պարտադիր լիազորության իրականացմանն ուղղված ծախսերում ծախսային չափորոշիչների հնարավոր ազդեցությունը՝ մասնակցայնությունը: Այլ խոսքով ասած դիտարկվում է, թե յուրաքանչյուր պարտադիր լիազորության իրականացման ծախսի մեջ 5.1.1 - 5.1.6 կետերում բերված ո՞ր ծախսային չափորոշիչներն են հիմնական մասնակցություն ունենում:

Ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի մասնակցության հաշվարկը

*ա) ըստ փաստացի կատարած գործառնական ծախսերի*

Ստորև բերվում են համայնքի սեփական լիազորությունների շրջանակում իրականացված գործառնական ծախսերի մեջ յուրաքանչյուր ծախսի բաժնեմասը (%) և դրանց հնարավոր կապը այն ծախսային չափորոշիչների հետ, որոնք ազդում են այդ լիազորությունների իրականացման ծախսերի վրա (աղյուսակ 2) :

Համայնքի գործառնական ծախսերը, դրանց փաստացի բաժնեմասերի և ծախսային գործակիցների կապը

Աղյուսակ 2

	Ծախսային ուղղություններ	Գործակիցներ	Ծախսի տեսակարար կշիռը <sup>1</sup> (%)
1	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ	<b>ՄԳ, ՏՄԳ, ԲԳ, ԲՔԳ</b>	30
2	Կրթություն	<b>ՄԳ, ԲՏԿԳ, ԾՈԳ, ԲԳ, ԲՔԳ</b>	15
3	Առողջապահություն	<b>ՄԳ, ԲՏԿԳ, ԾՈԳ,</b>	0
4	Սոցիալական ապահովություն և ապահովագրություն	<b>ՄԳ, ԲՏԿԳ,</b>	5
5	Մշակույթ, սպորտ, կրոն	<b>ՄԳ, ԲՏԿԳ, ԾՈԳ, ԲՔԳ</b>	10
6	Բնակ. կոմունալ տնտեսություն	<b>ՄԳ, ԾՈԳ, ԲՔԳ, ԲԳ,</b>	20
7	Շինարարություն և բնապահպան.	<b>ՄԳ, ԲԳ,</b>	0
8	Տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն	<b>ՄԳ, ԾՈԳ, ԲԳ, ԲՔԳ, ՏՄԳ,</b>	0
9	Հասարակական կարգի պահպանում	<b>ՄԳ, ԲՔԳ</b>	0
10	Պաշտպանություն	<b>ՄԳ, ԲՔԳ</b>	0
11	Տնտեսական այլ ծառայություններ	<b>ՄԳ, ՏՄԳ, ԲԳ, ԲՔԳ</b>	0
12	Համայնքի բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններից չդասվող ծախսեր	<b>ՄԳ, ՏՄԳ, ԲՔԳ,</b>	20
<b>ԸՆԴԱՄԱՆՆԵՐ</b>			<b>100</b>

Ընդհանուր համայնքային (վարչական) ծախսերի մեջ յուրաքանչյուր ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի ազդեցության միջին տեսակարար կշիռը հաշվարկելու համար, պայմանականորեն ընդունվում է, որ նույն գործառնական ծախսի վրա ազդող ծախսային գործակիցները մասնակցում են հավասարաչափ, իսկ հաշվարկի համար վերցվում է նրանց մասնակցության միջին թվաբանական արժեքը (աղյուսակներ 3, 4):

1. Վերցված է վերջին 3 տարում ՀՀ համայնքների բյուջեների հանրագումարում վարչական բյուջեի գծով տվյալ ծախսի միջին ցուցանիշը 5%-ի ճշտությամբ (տես հավելված 1):

Ծախսային գործակիցների տեսակարար կշռի հաշվարկ

Աղյուսակ 3

Գործակիցներ		Ընդհանուր բնույթի համայն-բային ծառայություններ	Կրթություն	Առողջապահություն	Սոցիալական ապահովություն և ապահովագրություն	Մշակույթ, սպորտ, կրոն	Բնակ. կոմունալ տնտեսություն	Շինարարություն և բնապահպան.	Տրանսպորտ. և կապ, ճանապարհ. տնտեսություն	Հասարակական կառուցվածքի պահպանում	Պաշտպանություն	Տնտեսական այլ ծառայություններ	Հիմնական ուղղություններին չհասանելի ծախսեր	Ընդամենը	Տեսակարար կշռ <sup>2</sup> (Կ) (%)
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Մասշտաբի գործակից	<b>ՄԳ</b>	30	15	0	5	10	20	0	0	0	0	20	100	25
2	Տրանսպորտային մատչելիության գործակից	<b>ՏՄԳ</b>	30	0	0	0	0	0	0	0	0	0	20	50	15
3	Համայնքային ծառայությունների որակի գործակից	<b>ԾՈԳ</b>	0	15	0	0	10	20	0	0	0	0	0	45	10
4	Համայնքի բարձրադիրության գործակից	<b>ԲԳ</b>	30	15	0	0	0	20	0	0	0	0	0	65	15
5	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից	<b>ԲՔԳ</b>	30	15	0	0	10	20	0	0	0	0	20	95	25
6	Բնակչության տարիքային կառուցվածքի գործակից	<b>ԲՏԿԳ</b>	0	15	0	5	10	0	0	0	0	0	0	30	10
													385	100	

2. Ցուցանիշը կլորացված է 5%- ի ճշտությամբ:

Ծախսային գործակիցների տեսակարար կշիռը

Աղյուսակ 4

Գործակիցներ	Տեսակարար կշիռ	
	Տեսակը	(%)
Մասշտաբի գործակից	Կ <sup>ՄԳ</sup>	25
Տրանսպորտային մատչելիության գործակից	Կ <sup>ՏՄԳ</sup>	15
Համայնքային ծառայությունների որակի գործակից	Կ <sup>ԾՈԳ</sup>	10
Համայնքի բարձրադիրության գործակից	Կ <sup>ԲԳ</sup>	15
Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից	Կ <sup>ԲԲԳ</sup>	25
Բնակչության տարիքային կառուցվածքի գործակից	Կ <sup>ԲՏԿԳ</sup>	10

բ) ըստ համայնքի ղեկավարի՝ օրենքով ամրագրված պարտադիր լիազորությունների

Ստորև բերվում են համայնքի ղեկավարի՝ օրենքով ամրագրված պարտադիր լիազորությունների ցանկը և այդ լիազորությունների իրականացման ծախսերի վրա 5.1.1 – 5.1.6 կետերում բերված ծախսային գործակիցների հնարավոր մասնակցությունը (աղյուսակ 5):

Համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների և ծախսային  
չափորոշիչների կապը

Աղյուսակ 5

Համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններ		Գործակիցներ
<b>I Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն</b>		Մասշտաբի գործակից
1	իր իրավասության շրջանակում միջոցներ է ձեռնարկում պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքները եւ օրինական շահերը.	Տրանսպորտային մատչելիության գործակից
2	կազմակերպում է համայնքի բնակիչների հաշվառումը.	
2.1	սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության եւ հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ.	
3	ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաեւ դատարանում.	
4	կատարում է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները եւ ձեռնարկում է միջոցներ.	
5	իր լիազորությունների շրջանակում կայացրած որոշումներով խթանում է տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերի իրականացմանը եւ նպաստում ու օժանդակում է համայնքում նրանց գործունեության առավել արդյունավետ իրականացմանը.	
6	կանոնակարգում է հանրահավաքների, երթերի, ցույցերի եւ զանգվածային այլ միջոցառումների անցկացումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգով.	
7	կազմակերպում է փաստաթղթերի պատճենների եւ կրկնօրինակների տրամադրումը համայնքի արխիվից:	
<b>II Ֆինանսներ</b>		Մասշտաբի գործակից
1	կազմում եւ համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխությունները և ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ ու տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն.	
2	տեղական տուրքերի եւ վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.	
3	համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.	
4	համաձայնեցնելով պետական լիազորված մարմնի հետ՝ համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում վարկային եւ փոխատվությունների ձեռով միջոցների ներգրավման, այդ թվում՝ համայնքային պարտատոմսերի թողարկման փաստաթղթերը.	

5	տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները, ապահովում է դրանց նպատակային օգտագործումը.	
6	ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը:	
<b>III Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>		Մասշտաբի գործակից
1	կառավարության սահմանած կարգով կազմում է քաղաքային եւ գյուղական համայնքների գլխավոր հատակագծերը, հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաները, գոտիավորման այլ փաստաթղթեր.	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից
2	սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական կադաստրը, կազմում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը եւ ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը.	Համայնքային ծառայությունների որակի գործակից
3	սահմանված դեպքերում եւ կարգով համայնքի բնակչությանը իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին, կառուցապատողներին տալիս է ճարտարապետա-հատակագծային առաջադրանք, համաձայնեցնում է ճարտարապետաշինարարական նախագծերը.	Տրանսպորտային մատչելիության գործակից
4	սահմանված կարգով տալիս է շինարարության (քանդան) թույլտվություն, օրենքով սահմանված կարգով միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.	Համայնքի բարձրադիրության գործակից
5	սահմանված կարգով ձեւակերպում է ավարտված շինարարության շահագործման փաստագրումը.	
5.1	կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը եւ օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետեւանքների վերացումը.	
6	սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման եւ պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետա-հատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ.	
7	իրականացնում է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը եւ բաշխումը, կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը.	
8	համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն.	
9	կազմակերպում է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքը, ապահովում է համայնքի սեփականություն համարվող բնակելի տների եւ ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի եւ այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը.	
10	կազմակերպում եւ կառավարում է համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի եւ այլ կառուցվածքների շահագործումը.	

11	կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը եւ կանաչապատումը.	
12	կազմակերպում է աղբահանությունը.	
13	կազմակերպում է գերեզմանատների գործունեությունը եւ դրանց պահպանման աշխատանքները.	
14	օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով նախապատրաստում է համատիրությունների հիմնադիր ժողովներ եւ աջակցում է դրանց անցկացմանը, ինչպես նաեւ օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքերի կառավարման այլ մարմինների ձեւավորմանը.	
15	կազմակերպում է այն բազմաբնակարան շենքերի պահպանումը, որոնք չեն կառավարվում համատիրությունների կամ օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից.	
16	համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերը:	
<b>IV Հողօգտագործում</b>		
1	կառավարության սահմանած կարգով կազմում է քաղաքային եւ գյուղական համայնքների հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաները.	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից
2	համայնքի հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաներին, գոտիավորման այլ փաստաթղթերին, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ եւ սահմանած պայմաններով, սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող հողամասերը.	
3	օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման նկատմամբ.	
4	օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով կանխարգելում, կասեցնում եւ վերացնում է ապօրինի հողօգտագործումները:	
<b>V Տրանսպորտ, կապ, ճանապարհային տնտեսություն</b>		Մասշտաբի գործակից
1	կազմակերպում է համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանումը եւ շահագործումը.	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից
2	կազմակերպում եւ կառավարում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակառուցվածքային տրանսպորտային հիմնարկների եւ կազմակերպությունների գործունեությունը.	
3	տալիս է համայնքի տարածքում մարդատար եւ երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվություն:	Տրանսպորտային մատչելիության գործակից

<b>VI Առևտուր և սպասարկում</b>		Մասշտաբի գործակից
1	մշակում է առևտրի, հասարակական սննդի եւ սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը եւ վերահսկում է դրանց կատարումը.	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից
2	համայնքի տարածքում՝ առևտրի համայնքային կանոններին, իսկ Երեւանում՝ համաքաղաքային կանոններին համապատասխան, տալիս է ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն.	Համայնքային ծառայությունների որակի գործակից Տրանսպորտային մատչելիության գործակից
3	տալիս է համայնքի տարածքում տոնավաճառներ կազմակերպելու, ինչպես նաեւ բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություն.	Բնակչության տարի-քային կառուցվածքի գործակից
4	համայնքի տարածքում սպասարկման գործունեության համայնքային կանոններին համապատասխան, խաղատներին, բաղնիքներին, սաունաներին, զվարճանքի, շահունով խաղեր կազմակերպող օբյեկտներին տալիս է ժամը 23.00-ից հետո աշխատելու թույլտվություն.	
5	համայնքի տարածքում՝ հանրային սննդի համայնքային կանոններին, իսկ Երեւանում համաքաղաքային կանոններին համապատասխան, տալիս է հանրային սննդի կազմակերպման եւ իրացման թույլտվություն.	
6	առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացման տարեկան ծրագրում համայնքի մասնակցության մասին:	
<b>VII Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>		Մասշտաբի գործակից,
1	Կազմակերպում եւ կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, գրադարանների, կրթական եւ մշակութային այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման եւ նորոգման աշխատանքները:	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից, Համայնքային ծառայությունների որակի գործակից, Բնակչության տարիքային կառուցվածքի գործակից, Համայնքի բարձրա-դիրության գործակից
<b>VIII Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>		Մասշտաբի գործակից,
1	Կազմակերպում եւ կառավարում է համայնքային ենթակայության առողջապահական եւ մարզական հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը:	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից, Համայնքային ծառայությունների որակի գործակից, Բնակչության տարիքային կառուցվածքի գործակից, Համայնքի բարձրա-դիրության գործակից



<b>IX Գյուղատնտեսություն</b>		Մասշտաբի գործակից,
1	կատարում է համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը եւ վերանորոգումը.	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից,
2	համաքաղաքային կանոններին համապատասխան տալիս է Երեւան քաղաքի եւ քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվություն եւ կատարում է դրանց ամենամյա հաշվառում:	Տրանսպորտային մատչելիության գործակից,  Համայնքի բարձրադիրության գործակից
<b>X Բնության և շրջակա միջավայրի պահպանություն</b>		Մասշտաբի գործակից,
1	կազմակերպում է համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային եւ ջրային տարածքների, ինչպես նաեւ շրջակա միջավայրի պահպանությունը:	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից

Համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացմանն ուղղված ծախսերի մեջ յուրաքանչյուր կարգավորիչ գործակցի ազդեցության միջին տեսակարար կշիռը հաշվարկելու համար պայմանականորեն ընդունվում է, որ`

- նույն լիազորության իրականացման ծախսի վրա ազդող ծախսային գործակիցները մասնակցում են հավասարաչափ,
- յուրաքանչյուր լիազորության իրականացմանն ուղղված ծախսերը հանդես են գալիս նույն հավասար բաժնենասով, իսկ հաշվարկի համար վերցվում է դրանց մասնակցության միջին թվաբանական արժեքը (աղյուսակներ 6, 7):

Ծախսային գործակիցների տեսակարար կշռի հաշվարկ

Աղյուսակ 6

Գործակիցներ		Լիազորություններում չափորոշիչների մասնակցության քանակը (հատ)										Տեսակարար կշռ <sup>3</sup> (Կ)	(%)
		Քաղաքացիների և տնտ. սուբյեկտների իրավունքների պաշտպանություն	Ֆինանսներ	Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն	Հողօգտագործում	Տրանսպորտ, կապ, ծան. տնտ.	Առևտուր և սպասարկում	Կրթություն, մշակույթ	Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ	Գյուղատնտեսություն	Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն		
1	Մասշտաբի գործակից	ՍԳ	√	√	√		√	√	√	√	√	8	25
2	Տրանսպորտային մատչելիության գործակից	ՏՍԳ	√		√		√				√	4	15
3	Համայնքային ծառայությունների որակի գործակից	ԾՈԳ			√			√	√	√		4	10
4	Համայնքի բարձրադիրության գործակից	ԲԳ			√		√		√	√	√	5	15
5	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից	ԲԲԳ			√	√	√	√	√	√	√	8	25
6	Բնակչության տարիքային կառուցվածքի գործակից	ԲՏԿԳ						√	√	√		3	10
												32	100

3. Ցուցանիշը կլրացված է 5%-ի ճշտությամբ:

Ծախսային գործակիցների տեսակարար կշիռը

Աղյուսակ 7

Գործակիցներ	Տեսակարար կշիռ	
	Տեսակը	(%)
Մասշտաբի գործակից	Կ <sup>ՄԳ</sup>	25
Տրանսպորտային մատչելիության գործակից	Կ <sup>ՏՄԳ</sup>	15
Համայնքային ծառայությունների որակի գործակից	Կ <sup>ԾՈԳ</sup>	10
Համայնքի բարձրադիտության գործակից	Կ <sup>ԲԳ</sup>	15
Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից	Կ <sup>ԲԲԳ</sup>	25
Բնակչության տարիքային կառուցվածքի գործակից	Կ <sup>ԲՏԿԳ</sup>	10

**5.3 Համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի արժեքը**

Ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցը հաշվարկվում է՝

$$\bar{\delta}Կ^i = \sum (Կ_n \times \deltaԿ^i_n), \text{ նույնն է թե՛}$$

$$\bar{\delta}Կ^i = Կ^ՄԳ \times ՄԳ^i + Կ^ՏՄԳ \times ՏՄԳ^i + Կ^ԾՈԳ \times \bar{\delta}ՈԳ^i + Կ^ԲԳ \times ԲԳ^i + Կ^ԲԲԳ \times ԲԲԳ^i + Կ^ԲՏԿԳ \times ԲՏԿԳ^i$$

Հաշվի առնելով 5.2.1 ա) և բ) կետերում ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի տեսակարար կշռի հաշվարկի արդյունքները, ստացվում է՝

$$\bar{\delta}Կ^i = 0.25 \times ՄԳ^i + 0.15 \times ՏՄԳ^i + 0.1 \times \bar{\delta}ՈԳ^i + 0.15 \times ԲԳ^i + 0.25 \times ԲԲԳ^i + 0.1 \times ԲՏԿԳ^i$$

**6. ՀՀ պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով համայնքներին տրվող դոտացիայի բաշխման կարգը**

ՀՀ պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով համայնքներին հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է այդ տարվա պետական բյուջեի մասին օրենքով և հավասար է համախմբված բյուջեի եկամուտների առնվազն չորս տոկոսին:

$\Gamma = 0,04 \times \text{ՀԲ}$ , որտեղ՝

- $\Gamma$  - համահարթեցման համար նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարն է,
- ՀԲ - ՀՀ համախմբված բյուջեի եկամուտներն են:<sup>4</sup>

Հարկավոր է նշել, որ ՀՀ համայնքներն ունեն օրենքով վերապահված նմանատիպ լիազորություններ, սակայն սեփական ֆինանսական միջոցները այդ լիազորությունների իրականացման համար խիստ տարբեր են: Այդ տարբերությունները մեղմելու (հարթեցնելու) համար են նախատեսված ֆինանսական համահարթեցման գումարները, որոնք նաև համայնքային բյուջեների համալրման լուրջ միջոցներ են:

Այս մեթոդաբանությունը դիտարկում է համահարթեցման դոտացիայի տրամադրման երկու սկզբունք (գործոն)՝

- ա) գործոն** - դոտացիաների բաշխում՝ ըստ համայնքի մասշտաբի գործակցի - **ԴՄ**,
- բ) գործոն** - դոտացիաների բաշխում՝ ըստ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի - **ԴԲԱ**:

Այս սկզբունքները համայնքների դոտացիաների հաշվարկման ժամանակ կիրառվում են հերթականությամբ, սկզբում՝ ըստ համայնքի մասշտաբի գործակցի, որից հետո՝ ըստ համայնքի բյուջետային ապահովվածության:

Այս երկու սկզբունքով համայնքներին բաշխվող դոտացիաների հանրագումարը պետք է հավասար լինի համահարթեցման նպատակով նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարին:

### 6.1 Դոտացիաների բաշխումը՝ ըստ համայնքի մասշտաբի գործակցի

Այս սկզբունքով համահարթեցման դոտացիաներ բաշխելու անհրաժեշտությունը բխում է այն իրողությունից, որ ՀՀ –ում կան բնակչության փոքր թվաքանակ ունեցող մեծ թվով համայնքներ, որոնք, նույնիսկ բարձր բյուջետային ապահովվածության գործակցի պայմաններում, չունեն բավարար ֆինանսական միջոցներ տարրական ծառայություններ իրականացնելու համար: Նմանատիպ համայնքների համար, միայն՝ ըստ բյուջետային ապահովվածության գործակցի, դոտացիաների բաշխումը չի կարող ապահովել բավարար արդյունք (անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացում), քանի որ այդ համայնքների ընթացիկ ծախսերի մեջ, հաստատուն մասի բաղադրիչը մի քանի անգամ ավելի մեծ է

4 Հարկ է նշել, որ համաձայն ներկայում գործող «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերության՝ Պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) հաշվարկվում է՝ հիմք ընդունելով տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի ոչ պակաս, քան 4 տոկոսը:

բնակչության թվաքանակից կախված (փոփոխական) մասի<sup>5</sup>: Համահարթեցման տրամաբանությունը հուշում է, որ փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքներին, մինչև բյուջետային ապահովվածության սկզբունքով համահարթեցման դոտացիաների բաշխումը, անհրաժեշտ է ապահովել նվազագույն հաստատուն չափի ֆինանսական միջոցով, որը կբավարարի տարրական ընթացիկ ծախսեր կատարելու համար:

*6.1.1. Ըստ համայնքի մասշտաբի գործակցի համահարթեցման դոտացիայի նվազագույն հաստատուն չափի հաշվարկը*

Ըստ համայնքի մասշտաբի գործակցի համահարթեցման դոտացիայի նվազագույն հաստատուն չափն ուղղակիորեն կախված է այն ծառայությունների քանակից և արժեքից, որն իրականացնելու է ՏԻՄ –ը:

Ունենալով համայնքի ղեկավարին օրենքով ամրագրված պարտադիր լիազորությունների ցանկ, առաջին հայացքից թվում է, որ հաշվարկները պետք է կատարել հենց այդ լիազորությունների իրականացմանն ուղղված ծախսերի տեսանկյունից, սակայն ստեղծված իրավիճակը՝

- լիազորությունների և ֆինանսական միջոցների անհամապատասխանություն,
- ֆինանսական միջոցների պակաս,
- հարկերի գանձման ցածր մակարդակ,
- պարտադիր լիազորությունների իրականացման օրենսդրական կարգի բացակայություն և այլն,

պարտադրում է հարցին մոտենալ՝ ելնելով այն սկզբունքից, որ **ՏԻՄ-երն իրենց վերապահված լիազորություններն իրականացնում են այն ծավալով և որակով, որքան ֆինանսական միջոցներ ունեն:**

Վերը նշվածից հետևում է, որ համահարթեցման դոտացիայի նվազագույն հաստատուն չափի խնդիրը քաղաքական լուծման անհրաժեշտություն ունի:

Սույն մեթոդաբանության մեջ դիտարկվում է այն հեռանկարը, որ համահարթեցման նվազագույն գումարները և համայնքի սեփական միջոցները (հաշվի առնելով հարկերի գանձման միջին մակարդակը) բավարար են ՏԻՄ –ի ապարատի պահպանման և նախադպրոցական (մանկապարտեզ) ծառայություն մատուցելու համար: Այս դեպքում, ըստ մասշտաբի գործակցի, հատկացվող դոտացիայի նվազագույն չափը հավասար կլինի.

$$\left( \bar{O}_{նվազ}^{աշխ} + \bar{O}_{նվազ}^{մանկ} \right) \cdot \eta \cdot \mathcal{Q}_{միջ}^{մասշ} = \eta \cdot \mathcal{Q}_{նվազ}^{մասշ}, \text{ որտեղ՝}$$

$\bar{O}_{նվազ}^{աշխ}$  - աշխատակազմի պահպանման նվազագույն ծախսերն են,

$\bar{O}_{նվազ}^{մանկ}$  - մանկապարտեզի պահպանման նվազագույն ծախսերն են,

<sup>5</sup> Հիմնավորող հաշվարկները բերված են հավելված 2 -ի մասշտաբի գործակցի հիմնավորման բաժնում:

$\Gamma Q_{միջ}^{մաս2}$  - համայնքային բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ համահարթեցման դոտացիաների միջին տեսակարար կշիռն է<sup>6</sup>,

$\Gamma_{նվազ}^{մաս2}$  - ըստ մասշտաբի գործակցի հատկացվող դոտացիայի նվազագույն չափն է:

Այս երկու պարտադիր լիազորությունների նվազագույն ծախսերի և համայնքային բյուջեների մեջ համահարթեցման դոտացիաների միջին տեսակարար կշռի հաշվարկը բերված է հավելված 3 –ում, համաձայն որի, նվազագույն ծախսերը հավասար են՝

աշխատակազմի պահպանման համար - 2625 հազ. դրամ,  
մանկապարտեզի պահպանման համար - 2300 հազ. դրամ,  
ընդամենը - 4925 հազ. դրամ,

դոտացիաների միջին տեսակարար կշիռը  $\Gamma Q_{միջ}^{մաս2}$  - 44.6%

հետևաբար՝

$\Gamma_{նվազ}^{մաս2} = 4925 \text{ հազ. դրամ} \times 44.6\% = 2196 \text{ հազ. դրամ}$

Ըստ մասշտաբի գործակցի, մեկ համայնքին հատկացվող դոտացիայի չափը հետագա հաշվարկների համար սահմանվում է.

$\Gamma_i^{մաս2} = 2.2 \text{ մլն. դրամ}$

#### 6.1.2. Ըստ համայնքի մասշտաբի գործակցի համահարթեցման դոտացիա ստացող համայնքների կազմի որոշումը

Կարևոր է սահմանել այն համայնքների կազմը, որոնք ըստ համայնքի մասշտաբի գործակցի, ստանալու են համահարթեցման դոտացիաներ: Այս հարցի լուծման համար անհրաժեշտ է հաշվի առնել այն գործոնները, որոնք որոշակի ազդեցություն ունեն այս սկզբունքով դոտացիա ստացող համայնքների կազմի որոշման վրա և, դրանցից ելնելով, գտնել մասշտաբի գործակցի այնպիսի սահմանային արժեք, որից բարձր ցուցանիշ ունեցող համայնքները դոտացիա կստանան, իսկ ցածր ցուցանիշ ունեցողները՝ չեն ստանա:

Մասշտաբի գործակցի սահմանային մակարդակի որոշման համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ՝

- մասշտաբի գործակցով համայնքի դոտացիա ստանալը չի բացառում նույն համայնքին դոտացիա ստանալ նաև ըստ բյուջետային ապահովվածության գործակցի,

6 Հաշվարկված է ՀՀ բոլոր համայնքների բյուջեների ծախսերի համրագումարի վերջին հինգ տարիների ցուցանիշներով:

- համայնքի բնակչության թվաքանակի աճին զուգահեռ ըստ մասշտաբայնության ստացվող դոտացիայի տեսակարար կշիռը համայնքի ընդհանուր եկամուտների մեջ նվազման միտում ունի,
- համայնքի բնակչության թվաքանակի նվազմանը զուգահեռ ըստ մասշտաբայնության ստացվող դոտացիայի տեսակարար կշիռը համայնքի ընդհանուր եկամուտների մեջ աճի միտում ունի,
- փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքների դեպքում ըստ մասշտաբի գործակցի տրված դոտացիան կտրուկ մեծացնում է բյուջետային ապահովվածության գործակիցը, որի արդյունքում զգալիորեն պակասում է ըստ բյուջետային ապահովվածության գործակցի դոտացիա ստանալու համայնքի հնարավորությունը,
- մեծաթիվ բնակչություն ունեցող համայնքների դեպքում ըստ մասշտաբի գործակցի տրված դոտացիան քիչ ազդեցություն ունի բյուջետային ապահովվածության գործակցի վրա, որի արդյունքում համայնքը պահպանում է ըստ բյուջետային ապահովվածության գործակցի դոտացիա ստանալու հնարավորությունը:

Հաշվի առնելով վերը նշվածը, փորձնական եղանակով (փորձելով տարբեր արժեքներ) որոշվեց մասշտաբի գործակցի սահմանային մակարդակի արժեք ընդունել միջին մասշտաբայնության գործակցի արժեքը, որը հավասար է 1 –ի: Այս որոշման տնտեսագիտական էֆեկտի մանրամասները բերված են հավելված 3 –ում:

*6.1.3. Ըստ համայնքի մասշտաբի գործակցի, համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի հաշվարկման կարգը*

Ըստ համայնքի մասշտաբի գործակցի, համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարը հաշվակվում է հետևյալ բանաձևով.

$$ԴՄ = Դ_1^{\text{մասշ}} \times Զ\text{Թ}^{\text{մասշ}} , \text{ որտեղ՝}$$

- ԴՄ** - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի գումարն է,
- Դ<sub>1</sub><sup>մասշ</sup>** - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող մեկ համայնքի դոտացիայի չափն է,
- ԶԹ<sup>մասշ</sup>** - ըստ մասշտաբի գործակցի դոտացիա ստացող համայնքների թիվն է:

**6.2. Դոտացիաների բաշխում ըստ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի**

Այս սկզբունքով դոտացիա են ստանում ՀՀ բոլոր այն համայնքները, որոնց բյուջետային ապահովվածության գործակիցը, ներառյալ «ա» գործոնով տրված դոտացիան, փոքր է բյուջետային ապահովվածության ընտրված մակարդակից:

*6.2.1. Ըստ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի, համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի հաշվարկման կարգը*

Նկատի ունենալով, որ համահարթեցման համար նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարը՝  $Դ$  -ն, ըստ հերթականության՝ բաշխվում է սկզբում «ա» գործոնով, որից հետո միայն մնացած գումարի բաշխման համար կիրառվում է «բ» գործոնը, ապա ակնհայտ է, որ ըստ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի («բ» գործոն) համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարը հավասար կլինի՝

$$ԴԲԱ = Դ - ԴՄ, \text{ որտեղ՝}$$

- $ԴԲԱ$  - ըստ բյուջետային ապահովվածության գործակցի բաշխվող դոտացիայի գումարն է,
- $Դ$  - համահարթեցման համար նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարն է,
- $ԴՄ$  - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի գումարն է:

*6.2.2. «բ» գործոնով դոտացիա բաշխելու համար համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի հաշվարկման կարգը*

Համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի հաշվարկման կարգը նկարագրված է այս մեթոդաբանության 3 –րդ կետում: Սակայն «բ» գործոնով դոտացիայի հաշվարկման համար, որպես բյուջետային ապահովվածության գործակցի բաղադրիչ, հաշվարկվում է նաև «ա» գործոնով բաշխված դոտացիայի ազդեցությունը համայնքի եկամտային ունակության վրա: Այլ խոսքով, «ա» գործոնով բաշխված դոտացիայի գումարը համայնքի եկամտային ունակության գործակցի հաշվարկման համար, այլ եկամուտների հետ միասին, դիտարկվում է որպես լրացուցիչ եկամուտ և իր ազդեցությամբ մեծացնում է այդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցը:

Այստեղից հետևում է, որ համայնքի եկամտային ունակության գործակիցը «ա» գործոնով դոտացիայի բաշխելուց հետո կլինի՝

$$ԵՈՒԳ_iԱ = [(ԵՈՒ_i + Դ_iմասշ) / Բ_i] / [(ԵՈՒ + ԴՄ) / Բ], \text{ որտեղ՝}$$

- $ԵՈՒԳ_iԱ$  -  $i$ -րդ համայնքի եկամտային ունակության կարգավորիչ գործակիցն է ա) գործոնով դոտացիայի բաշխումից հետո,
- $ԵՈՒ_i$  -  $i$ -րդ համայնքի եկամտային ունակությունն է մինչև «ա» գործոնով դոտացիայի բաշխումը,
- $Բ_i$  -  $i$ -րդ համայնքի բնակչության թիվն է,
- $ԵՈՒ$  - բոլոր համայնքների եկամտային ունակության հանրագումարն է մինչև «ա» գործոնով դոտացիայի բաշխումը,
- $Դ_iմասշ$  - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող մեկ համայնքի դոտացիայի



- չափն է,
- ՂՄ** - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի ընդհանուր գումարն է,
- Բ** - ՀՀ բնակչության թիվը:

Հետևաբար՝ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցը «ա» գործոնով դոտացիայի բաշխելուց հետո կլինի՝

$$\mathbf{ԲԱԳ_i^U = ԵՈՒԳ_i / ԾԿԳ_i}, \text{ որտեղ՝}$$

- ԲԱԳ\_i^U** - i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցն է «ա» գործոնով դոտացիայի բաշխումից հետո<sup>7</sup>,
- ԵՈՒԳ\_i^U** - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է «ա» գործոնով դոտացիայի բաշխումից հետո,
- ԾԿԳ\_i** - i-րդ համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցն է:

#### 6.2.3. Ըստ բյուջետային ապահովվածության գործակցի, դոտացիա ստացող համայնքների կազմի (ցանկի) որոշումը

Ըստ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի, համահարթեցման դոտացիա են ստանում բոլոր այն համայնքները, որոնց բյուջետային ապահովվածության գործակիցը, «ա» գործոնով դոտացիայի բաշխումից հետո, ցածր է սահմանված համահարթեցման մակարդակից՝ չափանիշից (критерия выравнивания, equalization criteria):

«բ» գործոնով դոտացիա ստացող համայնքների թիվն ուղղակիորեն կախված է համահարթեցման սահմանային մակարդակի արժեքից (օրինակները բերված են հավելված 4 –ում): Միևնույն ժամանակ, «բ» գործոնով տրամադրվող ընդհանուր դոտացիայի հաստատուն չափի պարագայում, որքան ցածր է համահարթեցման սահմանային մակարդակը, այնքան ավելի մեծ է այդ գործոնով դոտացիա ստացող յուրաքանչյուր համայնքի դոտացիայի բաժնեմասը:

#### 6.2.4. Համահարթեցման սահմանային մակարդակը -ՀՄՄ

Համահարթեցման սահմանային մակարդակը լուրջ ազդեցություն ունի համահարթեցման քաղաքականության իրականացման վրա: Ինչքան բարձր է համահարթեցման սահմանային մակարդակը, այնքան ավելի անցկատ է **համահարթեցման** էֆեկտը «բ» գործոնով բաշխված դոտացիայի մեջ և այդ բաշխումն ավելի շատ նման է համայնքի մեկ շնչին ընկնող եկամուտների ուղղակի հա-

7 Բյուջետային ապահովվածության գործակիցը «նորմավորված» է՝  $\frac{\sum ԲԱԳ_i^A \cdot Բ_i}{Բ_{ՀՀ}}$

մալրմանը: Սրան հակառակ, ինչքան ցածրանում է համահարթեցման սահմանային մակարդակը<sup>8</sup> այնքան ավելի ազդեցիկ (նկատելի) է դառնում **համահարթեցման** էֆեկտը և ավելի շատ համայնքներ են զրկվում «բ» գործոնով դոտացիա ստանալու հնարավորությունից (օրինակները բերված են հավելված 4 –ում):

«բ» գործոնով բաշխվող դոտացիայի ընդհանուր գումարի հաստատուն մեծության պայմաններում, տեսականորեն կարելի է ընտրել համահարթեցման սահմանային մակարդակի այնպիսի արժեք, որի դեպքում «բ» գործոնով դոտացիա ստացող բոլոր համայնքները կստանան այնքան գումար, որքան կբավարարի համահարթեցման սահմանային մակարդակի և համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի տարբերությունը ամբողջովին լրացնելուն (օրինակը բերված է հավելված 4 –ում): Այս դեպքը հնարավոր է միայն համահարթեցման սահմանային մակարդակի ամենացածր արժեքի դեպքում:

Այստեղից հետևում է, որ համահարթեցման սահմանային մակարդակի ընտրությունը լուրջ տնտեսական քաղաքականություն է, ինչը կարող է համապատասխան գործիք հանդիսանալ քաղաքականություն իրականացնող մարմինների համար:

*6.2.5. Համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի արժեքի և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերության լրացման համար անհրաժեշտ գումարի հաշվարկման կարգը*

«բ» գործոնով դոտացիա ստացող համայնքներին տրամադրվող համահարթեցման գումարները նպատակ ունեն բարձրացնել համայնքների բյուջետային ապահովվածության գործակցիցների արժեքները՝ այն հնարավորինս մոտեցնելով համահարթեցման սահմանային մակարդակին<sup>9</sup>: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր համայնքի համար այդ գումարի չափը կախված է՝

համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի արժեքից,  
համահարթեցման սահմանային մակարդակից (արժեքից),

«բ» գործոնով բաշխվող դոտացիայի ընդհանուր գումարից:

Համահարթեցման սահմանային ընտրված մակարդակի ցանկացած արժեքի համար յուրաքանչյուր համայնքին անհրաժեշտ է մի գումար, որը կբավարարի հասցնելու այդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի արժեքը համահարթեցման սահմանային մակարդակին:

Յուրաքանչյուր համայնքի համար վերը նշված գումարի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԳՈՒԻ_i^ՀՍՍ = (ՀՍՍ - ԲԱԳ_i^Ա) \times Բ_i \times \deltaԳ_i \times X, \text{ որտեղ՝}$$

8 Համահարթեցման սահմանային մակարդակը չի կարող ավելի փոքր լինել այն արժեքից, որի դեպքում, «բ» գործոնով տրվող դոտացիայի գումարը կբավարարի, այդ գործոնով դոտացիա ստացող համայնքների բյուջետային ապահովվածության գործակցի և սահմանային մակարդակի լրացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հանրագումարին:

9 «բ» գործոնով դոտացիա են ստանում միայն այն համայնքները, որոնց բյուջետային ապահովվածության գործակցը, ներառյալ «ա» գործոնով տրված դոտացիան, փոքր է համահարթեցման սահմանային մակարդակից:

**ԳՈՒՄ<sub>i</sub>ՅՍՍ** - i-րդ համայնքի համար անհրաժեշտ գումարի չափն է, որը կբավարարի ամբողջությամբ լրացնելու այդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի և համահարթեցման սահմանային մակարդակի տարբերությունը,

**ՅՍՍ** - համահարթեցման սահմանային մակարդակն է,

**Բ<sub>i</sub>** - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

**ԾԿԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցն է,

**Ե<sub>ՄԻԶ</sub><sup>1202</sup>** - մեկ շնչին ընկնող միջին համայնքային եկամուտներն են՝ ներառյալ «ա» գործոնով տրված դոտացիան:

$$E_{\text{ՄԻԶ}}^{1202} = \frac{\sum \text{ԵՈՒ}_i + \Gamma^U}{\text{Բ}_{\text{ՀՀ}}}, \text{ որտեղ՝}$$

**ԵՈՒ<sub>i</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է,

**Դ<sup>U</sup>** - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի ընդհանուր գումարն է,

**Բ<sub>ՀՀ</sub>** - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ):

*6.2.6. Համայնքներին «բ» գործոնով տրամադրվող համահարթեցման դոտացիաների հաշվարկման կարգը*

Ինչպես արդեն նշեցինք, «բ» գործոնով (համահարթեցման սկզբունքով) հատկացվող դոտացիան ձգտում է լրացնել համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի արժեքի և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերությունը: «Լրացումը» իրականացվում է այն տրամաբանությամբ, որ համայնքներից յուրաքանչյուրին տրամադրվող գումարի չափը կազմի լրիվ լրացման համար անհրաժեշտ գումարի հավասար բաժնեմասը:

Համայնքներին «բ» գործոնով տրամադրվող դոտացիաները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$\Gamma_i^{\text{ԲԱ}} = \text{ԳՈՒՄ}_i \text{ՅՍՍ} \times \text{Գ}_i^{\text{ԼՐԱ}}, \text{ որտեղ՝}$$

**Դ<sub>i</sub><sup>ԲԱ</sup>** - i-րդ համայնքին «բ» գործոնով (ըստ բյուջետային ապահովվածության գործակցի) տրվող դոտացիայի գումարն է<sup>10</sup>,

<sup>10</sup>  $\Gamma_i^{\text{ԲԱ}}$  - ն հաշվեկշռված է՝  $\sum \Gamma_i^{\text{ԲԱ}} = \Gamma^{\text{ԲԱ}}$

**ԳՈՒՄ<sub>i</sub>ՅՍՍ** - i-րդ համայնքի համար անհրաժեշտ գումարի չափն է, որը կբավարարի ամբողջությամբ լրացնելու այդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի և համահարթեցման սահմանային մակարդակի տարբերությունը,

**ԳԼՐԱ** - «բ» գործոնով տրվող դոտացիայի ընդհանուր գումարի տեսակարար կշիռն է՝ բոլոր համայնքների բյուջետային ապահովվածության գործակցի և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերությունը լրացնելու համար անհրաժեշտ միջոցների հանրագումարի մեջ:

$$\text{ԳԼՐԱ} = \text{ԴԲԱ} / \sum \text{ԳՈՒՄ}_i \text{ՅՍՍ}, \text{ որտեղ}$$

**ԴԲԱ** - ըստ բյուջետային ապահովվածության գործակցի բաշխվող դոտացիայի ընդհանուր գումարն է:

**Հավելված 1: ՀՀ համայնքների 2003-2005թթ.-ի վարչական  
բյուջեի փաստացի ծախսերն՝ ըստ գործառնական  
դասակարգման**

<b>Ծախսեր</b>	<b>2003թ.</b>		<b>2004թ.</b>		<b>2005թ.</b>		<b>միջին %</b>	
	(մլն. դրամ)	%	(մլն. դրամ)	%	(մլն. դրամ)	%		
<b>վարչական բյուջեի ծախսեր</b>	<b>19892.1</b>	<b>100.0</b>	<b>22482.9</b>	<b>100.0</b>	<b>27091.1</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b> <sup>11</sup>
Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ	6095.8	30.6	7525.5	33.5	8632.3	31.9	<b>32.0</b>	<b>30.0</b>
Կրթություն	3287.8	16.5	3304.8	14.7	4791.3	17.7	<b>16.3</b>	<b>15.0</b>
Առողջապահություն	3.9	0.0	14.1	0.1	43.6	0.2	<b>0.1</b>	<b>0.0</b>
Սոցիալական ապահովություն և ապահովագրություն	408.8	2.1	634.7	2.8	981.2	3.6	<b>2.8</b>	<b>5.0</b>
Մշակույթ, սպորտ, կրոն	1620.2	8.1	1839.1	8.2	2143.0	7.9	<b>8.1</b>	<b>10.0</b>
Բնակ. կոմունալ տնտեսություն	3358.1	16.9	3880.3	17.3	5064.2	18.7	<b>17.6</b>	<b>20.0</b>
Շինարարություն և բնապահպան.	0.3	0.0	0.0	0.0	2.1	0.0	<b>0.0</b>	<b>0.0</b>
Տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն	164.3	0.8	221.0	1.0	257.7	1.0	<b>0.9</b>	<b>0.0</b>
Հասարակական կարգի պահպանում	3.1	0.0	4.3	0.0	3.7	0.0	<b>0.0</b>	<b>0.0</b>
Պաշտպանություն	4.6	0.0	21.2	0.1	21.9	0.1	<b>0.1</b>	<b>0.0</b>
Տնտեսական այլ ծառայություններ	16.5	0.1	763.9	3.4	248.5	0.9	<b>1.5</b>	<b>0.0</b>
Համայնքի բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններին չդասվող ծախսեր	4928.7	24.8	4274.0	19.0	4901.6	18.1	<b>20.6</b>	<b>20.0</b>

11 Այս սյան բոլոր ցուցանիշները կլորացված են 5%-ի ճշտությամբ:

## Հավելված 2: Ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի հիմնավորումները

### Մասշտաբի գործակից

Մասշտաբի գործակիցն արտացոլում է մասշտաբի ազդեցությունը, որի իմաստը, տվյալ պարագայում, այն է, որ բնակչության թվաքանակի մեծացումը ավելացնում է նաև բյուջետային ծախսերը, սակայն ավելի փոքր չափով (օրինակ՝ բնակչության թվաքանակի կրկնապատկումը հանգեցնում է ծախսերի ավելացմանը 2 անգամից ավելի քիչ չափով): Հետևաբար, բնակչության մեծ թիվ ունեցող համայնքների համար մեկ բնակչի հաշվով ծառայություն մատուցելն ավելի մատչելի է, քան բնակչության փոքր թվաքանակ ունեցող համայնքների դեպքում:

Ընթացիկ (վարչական) ծախսերի գնահատման ժամանակ պարզվում է, որ այդ ծախսերը բնակչության թվի հետ կապված են հետևյալ ռեգրեսիվ հավասարմամբ՝

$$\bar{D}_i = a + p \times F_i, \text{ որտեղ՝} \quad (1)$$

$\bar{D}_i$  - i-րդ համայնքի ընթացիկ ծախսերն են,

$F_i$  - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

$a$  և  $p$  - հաստատուն դրական մեծություններ են:

Սրա հիմնավորումը կարելի է տեսնել նկ. 1-ում բերված օրինակում, որի համաձայն, ապացուցվում է համայնքի ընթացիկ ծախսերի և համայնքի բնակչության թվաքանակի կապը (ռեգրեսիայի գործակիցները հետևյալն են՝  $p < 0,001$ ,  $R^2 = 0,923$ ,  $a > 0$ ,  $p > 0$ ,  $(1) \Rightarrow y = 8.1x + 4338.1$ ):


Սա նշանակում է, որ  $a$ -ն ծախսերի հաստատուն գործակից է, որը կախված չէ բնակչության թվաքանակից: Բնակչության թվաքանակի մեծացումը  $k$  անգամ,

բերում է ծախսերի մեծացման  $\frac{a+kxpxF_i}{a+pxF_i} \Rightarrow k - \frac{a(k-1)}{a+pxF_i}$  անգամ, որը

( $k > 1$  դեպքում) փոքր է, քան  $k$ -ն:

Բնակչության թվաքանակի և ընթացիկ ծախսերի կապը<sup>12</sup>

Նկար 1



Բնակչության մեկ շնչին ընկնող ընթացիկ ծախսերի բանաձևն ունի հետևյալ տեսքը՝


$$\text{ԾԸ}_i \text{ մեկ շնչին ընկնող} = \omega / \text{Բ}_i + \rho, \text{ որտեղ՝}$$

$\text{ԾԸ}_i$  մեկ շնչին ընկնող - i-րդ համայնքի մեկ շնչին ընկնող ծախսերն են:

Բնակչության մեկ շնչին ընկնող ընթացիկ ծախսերը բնակչության թվաքանակի աճի համեմատ ունեն նվազման միտում (նկ. 2):

Բնակչության թվաքանակի և ընթացիկ ծախսերի կապը<sup>13</sup>

Նկար 2



12 Օինակներում օգտագործվել են մեկ մարզի (Տավուշ) և մեկ տարածաշրջանի (Սիսան) բոլոր համայնքների 2005թ.-ի բյուջետային տվյալները:

13 Օինակներում օգտագործվել են մեկ մարզի (Տավուշ) և մեկ տարածաշրջանի (Սիսան) բոլոր համայնքների 2005թ.-ի բյուջետային տվյալները:

Այս բոլորը վկայում է այն մասին, որ ընթացիկ ծախսերի իրականացման ժամանակ առկա է մասշտաբի էֆեկտը:

### Մասշտաբի գործակցի սահմանումը

Մասշտաբի ազդեցությունը հաշվի առնելու համար առաջարկվում է կիրառել մասշտաբի գործակիցը, որը հնարավորություն կտա հաշվի առնել ֆիքսված բաղադրիչի առկայությունը ընթացիկ ծախսերում:

i-րդ համայնքի համար մասշտաբի գործակցի բանաձևն ունի հետևյալ տեսքը՝

$$UQ_i = (1-\alpha) + \alpha \frac{P_{միջ.}}{P_i}, \text{ որտեղ՝}$$

- $\alpha$  - արտացոլում է ծախսերի մեջ ֆիքսված բաղադրիչը,
- $(1-\alpha)$  - արտացոլում է ծախսերի մեջ i-րդ համայնքի բնակչությանը պայմանավորված բաղադրիչը,
- $P_{միջ.}$  - համայնքային բնակչության միջին թվաքանակն է,
- $P_i$  - i-րդ համայնքի բնակչության թվաքանակն է:

Բնակչության թվաքանակի<sup>14</sup> վրա կիրառելով մասշտաբի գործակից, ստանում ենք մի մեծություն, որը ներառում է համայնքի բնակչության թիվը և միջին համայնքային բնակչության թիվը: Այս մեծության արժեքը համայնքային բնակչության միջին թվաքանակից քիչ բնակչություն ունեցող համայնքների համար մեծ է, և փոքր է՝ շատ բնակչություն ունեցող համայնքների համար:

a-ի և (a-1)-ի արժեքները որոշելու համար պայմանականորեն ընդունենք, որ ծառայություններից օգտվողը համայնքի ամբողջ բնակչությունն է, իսկ մասշտաբի գործակիցը ծախսերի գնահատման միակ կարգավորիչ գործակիցն է: Այս դեպքում հաշվարկային ծախսերի գնահատման բանաձևը կունենա հետևյալ տեսքը՝

$$\sum \bar{O}_i = \frac{\bar{O}_{\sum}}{P_{\sum}} \cdot P_i \cdot UQ_i \Rightarrow \sum \bar{O}_i = \frac{\bar{O}_{\sum}}{P_{\sum}} \cdot P_i \cdot \left( (1-\alpha) + \alpha \frac{P_{միջ.}}{P_i} \right), \quad (2)$$

որտեղ՝

$\sum \bar{O}_i$  - i-րդ համայնքի հաշվարկային ընթացիկ ծախսն է,

$\bar{O}_{\sum}$  - բոլոր համայնքների ընթացիկ ծախսերի հանրագումարն է,

$P_{\sum}$  -  $\sum$  բնակչության թիվն է:

Հավասարեցնելով i-րդ համայնքի (1) և (2) բանաձևերում բերված ծախսերը, կստանանք՝

$$\frac{\bar{O}_{\sum}}{P_{\sum}} \cdot P_i \cdot \left( (1-\alpha) + \alpha \frac{P_{միջ.}}{P_i} \right) = w + p \cdot q \cdot P_i$$

<sup>14</sup> Անհրաժեշտ է հաշվի առնել, որ, մասշտաբի գործակիցը «հաշվեկշռված» է այն իմաստով, որ  $\sum UQ_i \cdot P_i = P_{\sum}$ :



ձևափոխելով հավասարման ձախ մասը, կստանանք՝

$$\alpha \frac{\bar{O}_{33}}{P_{33}} \cdot P_{012} + (1-\alpha) \frac{\bar{O}_{33}}{P_{33}} \cdot P_i = w + p \cdot q \cdot P_i$$

Որպեսզի հավասարումը ճիշտ լինի, անհրաժեշտ է, որ հավասարման աջ և ձախ մասերում  $P_i$  –ի գործակիցներն ու հաստատունները հավասար լինեն:

Այստեղից հետևում է՝

$$w = \alpha \frac{\bar{O}_{33}}{P_{33}} \cdot P_{012} \quad (3) \quad p = (1-\alpha) \frac{\bar{O}_{33}}{P_{33}} \quad (4)$$

Տեղադրելով բանաձևերի մեջ համապատասխան տվյալները<sup>15</sup>, կստանանք՝

$$(3) \Rightarrow \alpha = 0.192 \quad (4) \Rightarrow \alpha = 0.194$$

Հիմք ընդունելով այս մեթոդաբանությունը, մասշտաբի գործակիցը հետագա հաշվարկների համար սահմանվում է  $\alpha = 0.2$ :

#### Բնակչության տարիքային կառուցվածքի գործակից

Բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցն արտահայտում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ բնակչության որոշակի տարիքային կազմի առավել բարձր պահանջարկը: ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շարքում այդպիսի ծառայությունները կարող են լինել նախադպրոցական (մանկապարտեզներ), արտադպրոցական (երաժշտական, արվեստի, նկարչական, սպորտի դպրոցներ, պատանի տեխնիկների և մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններ և այլն), հատուկ կրթական և մշակութային ծառայություններ, ինչպես նաև՝ սոցիալական օժանդակության ծրագրեր: Նշված ծառայությունների նկատմամբ արտահայտված բարձր պահանջարկ ունեն համայնքի բնակչության որոշակի տարիքային խմբեր: Այդպիսի տարիքային խմբերից են մինչև չափահաս տարիքի և աշխատունակ տարիքից բարձր բնակչությունը:

Բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$P_{S4q}^i = (1 + (P_i^t + P_i^o) / P_i) / (1 + (P^t + P^o) / P), \text{ որտեղ՝}$$

$P_{S4q}^i$  - i-րդ համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցն է,

$P_i^t$  - i-րդ համայնքի 0-16 տարեկան բնակչության թիվն է,

<sup>15</sup> Օգտագործվել են մեկ մարզի (Տավուշ) և մեկ տարածաշրջանի (Սիսան) բոլոր համայնքների ինչպես նաև հավելված 1-ում բերված 2005թ.–ի բյուջետային տվյալները:

- $P_i^0$  - i-րդ համայնքի աշխատունակ տարիքից մեծ բնակչության թիվն է,
- $P_i$  - i-րդ համայնքի բնակչության թիվն է,
- $P^6$  - ՀՀ 0-16 տարեկան բնակչության թիվն է,
- $P^0$  - ՀՀ աշխատունակ տարիքից մեծ բնակչության թիվն է,
- $P_{ՀՀ}$  - ՀՀ բնակչության թիվն է:

Տրանսպորտային մատչելիության գործակից

Տրանսպորտային մատչելիության գործակիցն արտահայտում է ՏԻՄ-երի ծախսային յուրահատկությունները՝ կապված համայնքի տրանսպորտային մատչելիության հետ: Վերջինս կախված է մի շարք ցուցանիշներից, որոնց շարքից սույն մեթոդաբանության շրջանակներում դիտարկվում են մայրաքաղաքից, մարզկենտրոնից և տարածաշրջանի կենտրոնից համայնքի կենտրոնի ունեցած հեռավորությունները: Հաշվարկների մեջ հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ վերը նշված կենտրոններից համայնքի հեռավորություններն ուղղակիորեն ազդում են համայնքի կողմից իրականացվող ծախսերի վրա, քանի որ այդ կենտրոններում են տեղաբաշխված պետական կառավարման այն կառույցները, որոնց հետ համայնքը գտնվում է մշտական կամ պարբերաբար կրկնվող աշխատանքային հարաբերություններում:

Տրանսպորտային մատչելիության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$S_{PQ}^i = 1 + (0,1 \times \sum_i P_{այր} + 0,3 \times \sum_i P_{արգ} + 0,6 \times \sum_i S_{արա}) / (0,1 \times \sum_{միջ} P_{այր} + 0,3 \times \sum_{միջ} P_{արգ} + 0,6 \times \sum_{միջ} S_{արա}),$$

որտեղ՝

- $S_{PQ}^i$  - i-րդ համայնքի տրանսպորտային մատչելիության գործակիցն է,
- $\sum_i P_{այր}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է մայրաքաղաքից,
- $\sum_i P_{արգ}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է մարզկենտրոնից,
- $\sum_i S_{արա}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է նախկին շրջկենտրոնից,
- $\sum_{միջ} P_{այր}$  - համայնքների միջին հեռավորությունն է մայրաքաղաքից:

$$\sum_{միջ} P_{արգ} = \sum_i \sum_j P_{այր} / \sum_{ՀՀ} ՀՀ, \quad \text{որտեղ՝}$$

- $\sum_i \sum_j P_{այր}$  - ՀՀ բոլոր համայնքների՝ մայրաքաղաքից ունեցած հեռավորությունների հանրագումարն է,

- $\sum_{ՀՀ} ՀՀ$  - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է,

- $\sum_{միջ} P_{արգ}$  - համայնքների միջին հեռավորությունն է մարզկենտրոնից:

$$\sum \text{Հ}_i \text{Մարդ} = \sum \text{Հ}_i \text{Մարդ} / \text{ՀԱՍ ՀՀ, որտեղ}$$
 - ՀՀ բոլոր համայնքների՝ իրենց մարզկենտրոնից ունեցած հեռավորությունների հանրագումարն է,

$$\text{Հ}_i \text{Մարդ} = \sum \text{Հ}_i \text{Մարդ} / \text{ՀԱՍ ՀՀ, որտեղ}$$
 - համայնքների միջին հեռավորությունն է իրենց նախկին շրջկենտրոնից:

$$\sum \text{Հ}_i \text{Տարա} = \sum \text{Հ}_i \text{Տարա} / \text{ՀԱՍ ՀՀ, որտեղ}$$
 - ՀՀ բոլոր համայնքների՝ իրենց նախկին շրջկենտրոնից ունեցած հեռավորությունների հանրագումարն է:

Գործակիցները, որոնք օգտագործվել են վերոհիշյալ բանաձևում, սահմանվել են փորձագիտական մեթոդով, հաշվի առնելով մայրաքաղաքում (ՀՀ Կառավարություն, նախարարություններ, պետական նշանակության կառույցներ և այլն), մարզկենտրոնում (մարզպետարան, դատախազություն, տարածաշրջանային կառույցների մարզային կենտրոններ և այլն) և տարածաշրջանի կենտրոնում (գանձապետարանի, անշարժ գույքի կադաստրի, սոցիալական ապահովության, վիճակագրության, հարկային և ոստիկանական ծառայությունների տարածքային բաժանմունքներ, առաջին ատյանի դատարաններ, նոտարներ, զինվորական կոմիսարիատներ և այլն) գտնվող պետական կառավարման մարմինների հետ ՏԻՄ-ի առնչման պարբերականությունը: Գործակիցներն, ըստ կենտրոնների, սահմանվել են՝

մայրաքաղաքից հեռավորության համար	- 0,1
մարզկենտրոնից հեռավորության համար	- 0,3
տարածաշրջանի կենտրոնից հեռավորության համար	- 0,6

**Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից**

Ծախսային կարիքների կարգավորիչ գործակցի մեջ, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակցի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նույն թվաքանակի բնակչություն ունեցող բազմաբնակավայր համայնքում որոշ ծառայությունների իրականացման ինքնարժեքն ավելի մեծ է, քան մեկ բնակավայր ունեցող համայնքում: Այդ տարբերությունը հետևանք է այն բանի, որ մի քանի բնակավայր ունեցող համայնքներում որոշ ծառայությունների մատուցման ժամանակ առաջանում են լրացուցիչ ծախսեր, ինչպես օրինակ՝

- դիտարկենք մի քանի բնակավայր ունեցող համայնքներում նախադպրոցական ծառայության իրականացման երկու հիմնական դեպք: **Առաջին**՝ երբ նախադպրոցական հիմնարկը (մանկապարտեզ) գտնվում է բազմաբնակավայր համայնքի բնակավայրերից մեկում: Այս դեպքում, մնացած բնակավայրերի նախադպրոցական ծառայության պահանջ ունեցողների համար առաջանում են լրացուցիչ դժվարություններ (տրանսպորտային ծախսեր, անհար-

մարավետություն, ժամանակի կորուստ, վտանգներ և այլն), ինչը, հաճախ, այդ բնակավայրերի բնակիչների դժգոհության և ծառայությունից օգտվելու հրաժարման պատճառ է հանդիսանում: **Երկրորդ`** երբ բնակավայրերից յուրաքանչյուրում, կամ մի քանիսում, իրականացվում է նախադպրոցական ծառայություն: Այս դեպքում, նախադպրոցական օբյեկտների թերբեռնվածության պատճառով մեծանում է ծառայության մատուցման ինքնարժեքը, ինչը բերում է լրացուցիչ ծախսերի:

Հատկանշական է, որ վերը նշված դեպքերը զուտ նախադպրոցական դաստիարակության առանձնահատկություն չեն, այլ հատուկ են կրթության և մշակույթի ամբողջ ոլորտին:

- Բազմաբնակավայր համայնքներում կոմունալ ծառայությունների իրականացման հավելյալ ծախսեր են առաջանում հատկապես աղբահանության և բարեկարգման մասով, մասնավորապես` դա պայմանավորված է ինչպես տրանսպորտային լրացուցիչ ծախսերով, այնպես էլ բնակավայրերի միջև ընկած տարածության (ճանապարհի) առկայությամբ, որը շատ դեպքերում կառուցապատված տարածք չի և ավելի ծախսատար է` պահպանման ծախսերի տեսանկյունից:
- Տրանսպորտային ծառայության իմաստով, բազմաբնակավայր համայնքները փաստացի իրականացնում են մի լիազորություն, որն իր առանձնահատկություններով ավելի մոտ է միջհամայնքային տրանսպորտի կազմակերպման գործընթացին, սակայն բիզնեսի տեսանկյունից քիչ հրապուրիչ է և լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն ունի:

Ընդհանրացնելով, կարելի գալ այն եզրակացության, որ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակից կախված, փոփոխության է ենթարկվում համայնքի կողմից իրականացվող որոշ ծառայությունների մատուցման ինքնարժեքը, և այլ հավասար պայմաններում (բնակչության թիվ, տարածք և այլն) գտնվող երկու համայնքների համար միևնույն ծավալով և որակով ծառայությունների մատուցման արժեքը տարբեր է` հօգուտ մեկ բնակավայրից կազմված համայնքի, որով և հիմնավորվում է համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակցի անհրաժեշտությունը:

Հատկանշական է, որ համայնքների խոշորացման համատեքստում, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակիցն իր մեջ պարունակում է նաև որոշակի խրախուսող (շահավետ) տարր, այն է` համայնքների միանալու (խոշորացման) պարագայում նախկին երկու համայնքները հանդես են գալու որպես մեկ համայնք` երկու բնակավայրով: Նոր կարգավիճակ ունեցող համայնքը կունենա բնակավայրերի քանակի գործակցի ավելի բարձր արժեք, ինչը դոտացիայի հաշվակման համար ավելի շահավետ պայման է:

Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակիցը հաշվարկվում է

$$ԲԲԳ^i = 1 + 0,2(ԲՆԹ_i - 1) \text{ բանաձևով, որտեղ`}$$

**ԲԲԳ<sup>i</sup>** - i-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակը հաշվի առնող գործակիցն է,

**ԲՆԹ<sub>i</sub>** - i-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի թիվն է:

Բանաձևից երևում է, որ համայնքի կազմում մեկից ավել յուրաքանչյուր բնակավայրի ավելացման դեպքում համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակիցն ավելանում է 20% -ով:

Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակցի այս արժեքը սահմանվել է փորձագիտական մեթոդով՝ ուսումնասիրելով և վերլուծելով համայնքների ծախսային յուրահատկությունները:

Համայնքի բարձրադիրության գործակից

Համայնքի բարձրադիրության գործակիցն արտահայտում է ՏԻՄ-երի կողմից ծառայություններ մատուցելու ընթացքում առաջացող այն ծախսային յուրահատկությունները, որոնք բխում են ծովի մակերևույթից համայնքի ունեցած բարձրության միջից: Այդ յուրահատկությունները, մասնավորապես, հետևանք են բնակլիմայական (տեղումների քանակ, ջեռուցման սեզոնի տևողություն, տարվա մեջ բացասական ջերմաստիճանով օրերի քանակ և այլն) և աշխարհագրական (տրանսպորտային և կապի միջոցների հասանելիություն, առողջապահական խնդիրներ և այլն) պայմանների:

Համայնքի բարձրադիրության գործակիցը հաշվարկվում է՝ համաձայն ՀՀ Կառավարության «ՀՀ բնակավայրերն ըստ բարձրունքային միջերի դասակարգելու մասին» 1998թ. նոյեմբերի 27-ի թիվ 756 որոշմամբ հաստատած *լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի ցանկի* (ցանկը փոփ. 15.01.00 թիվ 17, 16. 05.01 թիվ 426, 06. 02.03 թիվ 110-ն որոշումներ).

$$բգ^i = գ^3բ_i, \text{ որտեղ՝}$$

- բգ<sup>i</sup>** - i-րդ համայնքի բարձրադիրության գործակիցն է,
- գ<sup>3</sup>բ<sub>i</sub>** - i-րդ համայնքի բարձրադիրության գործակցի արժեքն է, որը պայմանավորված է ծովի մակերևույթից համայնքի կենտրոնի բարձրությամբ -  $H_i$ , երբ՝

$H_i$	<b>գ<sup>3</sup>բ<sub>i</sub></b>
մինչև 1700մ	1
1700-2000մ	1,2
2000մ բարձր	1,4

**գ<sup>3</sup>բ<sub>i</sub>** –ի արժեքները հաշվարկված են փորձագիտական մեթոդով՝ հիմք ընդունելով և վերլուծելով մինչ անկախության (սովետական) ժամանակաշրջանի գործող նորմատիվները:

Համայնքային ծառայությունների որակի գործակից

Համայնքային ծառայությունների որակի գործակիցը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների ցանկը (հատկապես կամավոր լիազորությունների գծով), ըստ համայնքի կար-

գավիճակի (թաղային, քաղաքային, գյուղական, մարզկենտրոն և այլն), կարող են տարբեր լինել և, անհրաժեշտությունից ելնելով, ունենալ տարբեր որակ:

Առաջնորդվելով այս մոտեցմամբ՝ համայնքները բաժանված են երեք խմբի (աղյուսակ 1):

Համայնքների բաժանումը՝ ըստ ծառայությունների

Աղյուսակ 1

Խումբ	Ծառայությունների բնութագիր	Գժ <sub>i</sub>	Համայնքներ
I	ընդհանուր	1	բոլոր համայնքները, բացառությամբ II և III խմբում ընդգրկվածների
II	բարձր	1,2	բոլոր քաղաքային (թաղային) համայնքները, բացառությամբ III խմբում ընդգրկվածների
III	արտահայտված բարձր	1,4	ցանկը հաստատում է ՀՀ Կառավարությունը կամ պետական լիազոր մարմինը (ՏԿՆ)

$$\bar{\sigma}\sigma^i = \sigma\bar{\sigma}_i, \text{ որտեղ՝}$$

- $\bar{\sigma}\sigma^i$  - i-րդ համայնքի ծառայությունների որակի գործակիցն է,  
 $\sigma\bar{\sigma}_i$  - i-րդ համայնքի ծառայությունների որակի գործակցի արժեքն է, որը սահմանված է փորձագիտական մեթոդով:

**Հավելված 3: Ըստ համայնքի մասշտաբի գործակցի, դոտացիաների բաշխման մեթոդաբանության հիմնավորումներ և հաշվարկներ**

**3.1. Պարտադիր լիազորությունների նվազագույն ծախսերի հաշվարկը**

*Մեկ խմբանոց մ/մանկապարտեզի պահպանման ծախսերի նախահաշիվ*

5-օրյա աշխատանքային շաբաթ  
9-ժամյա աշխատաժամանակով

Սուր-մանկապարտեզների պահպանման համար անհրաժեշտ հաստիքները և դրույքները վերցված են ԽՍՀՄ լուսավորության նախարարի 1971թ. դեկտեմբերի 31-ի թիվ 103 հրամանով հաստատված նորմատիվներից և ՀՀ կրթության և գիտության նախարարի (համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հետ) հրամանի նախագծից, որը նախատեսվում է գործողության մեջ դնել 2008թ. հունվարի 1-ից: Համաձայն վերոհիշյալ նորմատիվների, մ/մանկապարտեզներում մեկ խումբ պահելու համար, անհրաժեշտ է 14-15 հաստիք՝ 10.1-10.6 դրույքով, երեխաների թիվը՝ 18-25:

Ծախսային հոդվածների հաշվարկների համար հիմք են ծառայել ՀՀ ֆինանսների նախարարի 2002թ. բյուջեի նախագծի կազմման մեթոդական ուղեցույցում սահմանված նորմատիվները: Հաշվի առնելով այդ նորմատիվները, մ/մանկապարտեզի մեկ խմբի պահպանման ծախսը տարեկան կկազմի շուրջ 7.0մլն. դրամ: Հաշվի առնելով գյուղական համայնքների բյուջեների հնարավորությունը, մեր հաշվարկներով, մ/մանկապարտեզներում մեկ խումբ (միջինը 12 երեխայով) պահելու համար կարելի է հաստիքների մի մասը համատեղել, որոշ հաստիքներ էլ չպահել, այն է՝ հաշվապահությունը կարող է վարել գյուղապետարանի հաշվապահը, բուժքրոջ պարտականությունը՝ գյուղի բուժկետի աշխատողը, լվացքատան ծառայությունը կարելի է հանձնարարել ծնողներին: Նման պայմաններում մ/մանկապարտեզում մեկ խումբ պահելու համար անհրաժեշտ կլինի ներքոհիշյալ հաշվարկով ստացված ծախսը:

Մեկ խմբանոց մ/ մանկապարտեզի աշխատողների աշխատավարձի ծախսեր /հազ.դրամ/

	Հաստիք	Դրույք	Դրույքի արժեք	Գումար	Պարտադիր սոց. վճար
1.	Տնօրեն -դաստիարակ	1.0	30.0	30.0	7.0+1.5=8,5
2.	Դաստիարակի օգնական	0.5	20.0	10.0	7.0
3.	Գործավար-տնտեսվար	0.5	15.0	7.5	7.0
4.	Խոհարար	1.0	15.0	15.0	7.0
5.	Օժանդակ բանվոր-պահակ	0.5	15.0	7.5	7.0
	<b>Ընդամենը</b>	<b>3.5</b>	<b>95,0</b>	<b>70.0</b>	<b>36.5</b>

Դաստիարակների աշխատավարձի չափը հաստատված է 2005թ. նոյեմբերի 15-ին ընդունված «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի 5 կետով:

Տարեկան ծախսերի նախահաշիվ

/հազ. դրամ/

Հոդվածի համար	Հոդվածի անվանում	Գումար
0010	աշխատավարձ	70.0*12=840.0
1600	սոց. վճարներ	36.5*12=438.0
2100	գրաս. և տնտ. ապրանքներ	2243*12(երեխա)= 26.9
2200,2300	գույք և սարքավ., փափուկ գույք	6930*12(երեխա)= 83.2
2500	սնունդ	504*22*12*12=1596.7
3000	կապի ծառայութ.	4.8*12=57.6
3500, 3550	էլ.էներգիա, վառելիք, (ջեռուցում)	5714*12=68.6
Ընդամենը		3111.0

Այսպիսով, հնարավոր նվազագույն ծախսերը մեկ խմբի պահպանման համար կկազմեն 3.1 մլն. դրամ: Եթե հաշվի առնենք, որ սննդի գումարի կեսը կվճարեն ծնողները, ապա պահպանման ծախսը կկազմի շուրջ 2.3 մլն. դրամ:

Փոքր համայնքի նվազագույն աշխատակազմի պահպանման ծախսեր

Փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմի պահպանման նվազագույն ծախսերն ունեն ներքոհիշյալ պատկերը.

Համայնքի աշխատակազմի աշխատավարձի ծախսեր

/հազ. դրամ/

	Հաստիքը	Դրույքը	Դրույքի արժեքը	Պարտադիր սոց. վճարները
1.	Գյուղապետ	1	40.0	7.0+3.0=10.0
2.	Գյուղապետի տեղակալ	1	30.0	7.0+1.5=8.5
3.	Աշխատակազմի քարտուղար	1	30.0	7.0+1.5=8.5
4.	Հաշվապահ	1	25.0	7.0+0.75=7.75
5.	Պահակ, հավաքարար	1	15.0	7.0
Ընդամենը			140.0	34.7



Տարեկան ծախսերի նախահաշիվ

/հազ. դրամ/

Հոդվածի համար	Հոդվածի անվանում	Գումար
0010	աշխատավարձ	140.0*12=1680.0
1600	սոց. վճարներ	34.7*12=416.4
2100	գրաս. և տնտ. ապրանքներ	6.5*5= 32.5
2650, 2700, 2800, 2900	գործուղումներ, ծառ. ուղևոր., տրանսպորտի ծառայութ., վճար	5.0*5*12 =300.0
3000	կապի ծառայութ.	4.8*12=57.6
3500	էլ.էներգիա	13.2*5=66.0
3550	ջեռուցման ծախս	14.4*5=72.0
Ընդամենը		2624.5

Այսպիսով, ամենասեղմ հաշվարկներով, փոքր բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմի պահպանման համար կպահանջվի շուրջ 2.6 մլն. դրամ, որտեղ հաշվի են առնվել միայն ամենամանրաժեշտ ծախսերը: Նորմատիվների համար հիմք են ծառայել ՀՀ ֆինանսների նախարարության 2002թ. պետական բյուջեի կազմման մեթոդական ուղեցույցում սահմանված նորմատիվները:

**3.2. Համայնքային բյուջեների մեջ համահարթեցման դոտացիաների միջին տեսակարար կշռի հաշվարկը**

Ստորև բերվում են ՀՀ համայնքների բյուջեների փաստացի եկամուտները վերջին 5 տարիների կտրվածքով:

	2001թ.		2002թ.		2003թ.		2004թ.		2005թ.	
	գումարը (մլն.դրամ)	%	գումարը (մլն.դրամ)	%	գումարը (մլն.դրամ)	%	գումարը (մլն.դրամ)	%	գումարը (մլն.դրամ)	%
Համայնքների բյուջեների եկամուտներն առանց դոտացիաների	8479.3	55.5	8788.4	43.2	13666.4	60.0	16405.6	60.5	18813.4	57.8
<b>Համայնքների բյուջեների հատկացվող դոտացիաները</b>	<b>6801.9</b>	<b>44.5</b>	<b>11571.7</b>	<b>56.8</b>	<b>9159.8</b>	<b>40.0</b>	<b>10,696,0</b>	<b>39.5</b>	<b>13752.0</b>	<b>42.2</b>
Համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտները	15281.2	100	20360.1	100	22826.2	100	27101.6	100	32565,4	100

Համահարթեցման դոտացիաների միջին տեսակարար կշիռը հավասար է՝

$$\Gamma_{\text{միջ}}^{\text{մասշ}} = (44.5\% + 56.8\% + 40.0\% + 39.5\% + 42.2\%) / 5 = 44.6\%$$

### 3.3. Մասշտաբի գործակցի սահմանային մակարդակի որոշման հիմնավորումներ

Ալցնհայտ է, որ, համայնքի բնակչության թվաքանակի փոքրացմանը զուգահեռ, համայնքի ընթացիկ ծախսերի մեջ ( $\bar{\Delta}_i = \omega + p \times P_i$ )<sup>17</sup> ծախսերի փոփոխական մասի՝ ( $p \times P_i$ ) -ի արժեքը ձգտում է գրոյի: Այս դեպքում, ըստ մասշտաբի գործակցի, մեկ համայնքին հատկացվող դոտացիայի գումարը ուղղվում է միայն ծախսերի հաստատուն մասին՝  $\omega$  -ին: Իսկ համայնքի բնակչության թվաքանակի աճի դեպքում, ինչ-որ մի արժեքից սկսած, ընթացիկ ծախսերի մեջ  $\omega$  հաստատուն մասի ազդեցությունը դառնում է աննկատ:

Դիտարկենք մի քանի դեպք՝

Ընթացիկ ծախսերի մեջ հաստատուն մասի տեսակարար կշիռը<sup>18</sup>

Բնակչություն (մարդ)	Ընթացիկ ծախսեր (հ. դրամ)	Ծախսերի փոփոխական մաս (հ. դրամ)	Ծախսերի հաստատուն մաս (հ. դրամ)	Փոփոխակ. ծախսերի մեջ հաստատուն մասի տեսակար. կշիռը (%)
$P_i$	$\bar{\Delta}_i = \omega + p \times P_i$	$p \times P_i$	$\omega$	$\omega / \bar{\Delta}_i$
0 <sup>19</sup>	3438	0	3438	100
423	6877	3439	3438	50
1268	13747	10309	3438	25
3600	32706	29268	3438	10.5

ՀՀ բոլոր համայնքների բնակչության թվաքանակի տվյալներով (2005թ. հունվարի 1 –ի դրությամբ), մասշտաբի գործակցի սահմանային մակարդակի 1 արժեքին մոտավորապես համապատասխանում է 3600 բնակիչ ունեցող համայնքը:

Այստեղից հետևում է, որ 3600–ից շատ բնակիչ ունեցող համայնքների համար ընթացիկ ծախսերի մեջ հաստատուն ծախսի բաժնեմասը փոքր է 10.5 % -ից, այսինքն՝ այնքան էլ էական չէ:

17 Տես հավելված 2, մասշտաբի գործակցի, բանաձև 1:

18 Օինականերում օգտագործվել են մեկ մարզի (Տավուշ) և մեկ տարածաշրջանի (Սիսան) բոլոր համայնքների 2005թ.–ի բյուջետային տվյալները, որի համաձայն՝  $\omega = 3438$ ,  $p = 8.13$ :


19 Իրականում 0 թվով բնակչություն չի կարող լինել, բերված է որպես տեսական օրինակ:


**Հավելված 4: Համահարթեցման սահմանային մակարդակի և «բ» գործոնով դոտացիա ստացող համայնքների թվի կապը**

Ակնհայտ է, որ ըստ բյուջետային ապահովվածության գործակցի բաշխվող դոտացիայի հաստատուն ընդհանուր գումարի պայմաններում ինչքան բարձր լինի համահարթեցման սահմանային մակարդակի արժեքը, այնքան շատ թվով համայնքներ «բ» գործոնով դոտացիա կստանան, և հակառակը, համահարթեցման սահմանային մակարդակի իջեցմանը, հետ զուգահեռ՝ փոքրանում է «բ» գործոնով դոտացիա ստացող համայնքների թիվը (նկար 3):

Նկար 3

ա.  
Համահարթեցման սահմանային մակարդակի ցածր արժեք






#### 4.1 Համահարթեցման սահմանային մակարդակի ազդեցությունը համահարթեցման էֆեկտի վրա

Սկար 4–ում պատկերված է համահարթեցման սահմանային մակարդակի ազդեցությունը **համահարթեցման էֆեկտի վրա**: Ինչքան բարձր է համահարթեցման սահմանային մակարդակը (նկար 4. ա), այնքան ավելի աննկատ է համահարթեցման էֆեկտը, և հակառակը, ինչքան ավելի ցածր է համահարթեցման սահմանային մակարդակը (նկար 4. բ), այնքան ավելի ազդեցիկ (նկատելի) է **համահարթեցման էֆեկտը**:

Սկար 4


ա.

Համահարթեցման սահմանային մակարդակի բարձր արժեք



բ.


Համահարթեցման սահմանային մակարդակի ցածր արժեք



Նկար 5 –ում բերված է օրինակ, երբ՝ «բ» գործոնով դոտացիա ստացող բոլոր համայնքները ստանում են այնքան գումար, որը հնարավորություն է տալիս ամբողջովին լրացնել համահարթեցման սահմանային մակարդակի և համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի տարբերությունը:

Նկար 5

Համահարթեցման սահմանային մակարդակը հավասար է «բ» գործոնով դոտացիա ստանալուց հետո համայնքների բյուջետային ապահովվածության գործակցին



## **Նախագիծ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

### **Հոդված 1. Ֆինանսական համահարթեցման մասին օրենսդրությունը**

Ֆինանսական համահարթեցումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ կառավարության որոշումներով:

### **Հոդված 2. Օրենքի խնդիրները**

Սույն օրենքը սահմանում է ֆինանսական համահարթեցման հասկացությունը, սկզբունքները, պետական բյուջեում ֆինանսական համահարթեցման դրոտացիաների (այսուհետ՝ համահարթեցման դրոտացիաներ) համար նախատեսվող ֆինանսական միջոցների ընդհանուր ծավալը, համայնքների բյուջեներին տրամադրվող դրոտացիաների հաշվարկման և հատկացման կարգը:

### **Հոդված 3. Ֆինանսական համահարթեցման հասկացությունը**

Ֆինանսապես թույլ համայնքներին օժանդակելու և նվազագույն ծախսերը ապահովելու, ինչպես նաև համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու նպատակով համայնքներին տրամադրվում են ֆինանսական համահարթեցման դրոտացիաներ:

### **Հոդված 4. Ֆինանսական համահարթեցման սկզբունքները**

Ֆինանսական համահարթեցման սկզբունքներն են՝

1. Համայնքների սեփական եկամուտների և ծախսային կարիքների անհավասարաչափության մեղմացում.
2. Պետական բյուջեից համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող տրանսֆերտների ոչ նպատակայնություն.
3. Համահարթեցման դրոտացիաների հատկացման դեպքում համայնքների լիազորությունների իրականացման և ֆինանսական միջոցների օգտագործման ազատությունների և ինքնուրույնության պահպանում.
4. Պետական բյուջեից համայնքներին հատկացվող համահարթեցման դրոտացիաների ընդհանուր գումարի նվազագույն չափի օրենքով սահմանում.
5. Սույն օրենքով սահմանված կարգով դրոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով հաստատում.
6. Ֆինանսական համահարթեցման մասին օրենքի և դրա փոփոխությունների դեպքում ֆինանսական միջոցների բաշխման կարգի՝ համայնքների հետ քննարկման ապահովում:

**Յոթերորդ 5. Համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի նվազագույն չափը**

Համայնքներին համահարթեցման սկզբունքով բաշխվող դոտացիաների ընդհանուր գումարը կազմում է ոչ պակաս, քան հանրապետության համախմբված բյուջեի 4 տոկոսը: Այդ ֆինանսական միջոցները ամբողջությամբ բաշխվում են սույն օրենքով սահմանված համահարթեցման սկզբունքով:

$$Դ = 0,04 \times ԶԲ, \text{ որտեղ՝}$$

- Դ** - համահարթեցման համար նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարն է,
- ԶԲ** - Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեն է:

Համահարթեցման դոտացիայի ֆինանսական միջոցները ձևավորվում են պետական բյուջեի միջոցներից և հանդիսանում են համայնքների բյուջեներին հատկացվող ոչ նպատակային պետական տրանսֆերտներ:

Համահարթեցման դոտացիաներ ստացող համայնքները պահպանում են սեփական պատասխանատվությամբ գործելու իրավունքը և ֆինանսական միջոցների օգտագործման ազատությունը:

**Յոթերորդ 6. Համահարթեցման դոտացիաներ ստացող համայնքները**

Սույն օրենքով սահմանված ֆինանսական համահարթեցման քաղաքականության և ֆինանսական միջոցների բաշխման կարգի հիման վրա համահարթեցման դոտացիաներ կարող են ստանալ բոլոր համայնքները: Բացառություններ կարող են կազմել այն համայնքները, որոնց բյուջետային ապահովվածությունը կտրուկ տարբերվում է համայնքների գերակշռող մասի նմանատիպ ցուցանիշներից:

**Յոթերորդ 7. Համահարթեցման դոտացիաների հաշվարկման կարգի մեթոդաբանությունը**

Ֆինանսական համահարթեցման հայեցակարգի հիմքում համայնքների ոչ միայն ֆինանսական ունակությունների, այլ նաև օրենքով համայնքներին վերապահված պարտադիր լիազորությունների իրականացման ծախսային կարիքների գնահատումն է:

Համայնքի եկամտային ունակության և ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցի հարաբերությունը տվյալ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցն է, որի հիման վրա իրականացվում է համահարթեցման դոտացիայի հաշվարկը:

Համայնքի եկամտային ունակության գործակիցը տվյալ համայնքի մեկ շնչին ընկնող համայնքի բյուջե մուտքագրվող հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերությունն է հանրապետական նմանատիպ ցուցանիշին:

Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը տվյալ համայնքի



պարտադիր լիազորությունների իրականացմանն ուղղված ծախսերի յուրահատկությունները արտահայտող գործոնների՝ սույն օրենքով սահմանված ծախսային գործակիցների հանրագումարն է:

**Չորված 8.** Համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի հաշվարկման կարգը

Համայնքների բյուջետային ապահովվածության գործակիցը հաշվարկվում է՝

$$ԲԱԳ_i = ԵՈՒԳ_i / ԾԿԳ_i, \text{ որտեղ՝}$$

**ԲԱԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցն է,

**ԵՈՒԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է,

**ԾԿԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի ծախսային կարիքների գործակիցն է:

**Չորված 9.** Համայնքի եկամտային ունակության գործակցի հաշվարկման կարգը

Համայնքի եկամտային ունակության գործակիցը հաշվարկվում է՝

$$ԵՈՒԳ_i = (ԵՈՒ_i / Բ_i) / (ԵՈՒ / Բ \text{ ՅՅ} ), \text{ որտեղ՝}$$

**ԵՈՒԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է,

**ԵՈՒ<sub>i</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակությունն է,

**Բ<sub>i</sub>** - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

**ԵՈՒ** - բոլոր համայնքների եկամտային ունակության հանրագումարն է ,

**Բ ՅՅ** - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՅՅ բնակչության թիվ):

Համայնքի եկամտային ունակությունն է տվյալ համայնքի բյուջեին օրենքով ամրագրված հետևյալ եկամտատեսակների հանրագումարը՝

1. Հողի հարկի հաշվարկային ցուցանիշ.
2. Գույքահարկի հաշվարկային ցուցանիշ.
3. Մասհանվող հարկերի հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա փաստացի ցուցանիշ.
4. Պետական տուրքերի հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա փաստացի ցուցանիշ:

Համայնքի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային ցուցանիշը յուրաքանչյուր համայնքի գծով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված՝ այդ համայնքի բյուջե հաշվարկվող տրվան նախորդող երկրորդ տարում վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան գումարներն են (առանց հողի հարկի և գույքահարկի գծով հաշվարկվող տրվան նախորդող երկրորդ տարվա տարեսկզբի դրությամբ առկա չնարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև հաշվարկվող տրվան նախորդող երկրորդ տարվա ընթացքում հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների), ավելացված Հայաստանի Հանրապետության օրենքներով և համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների հաշվարկային տարվա բյուջեներում եկամուտների կորուստների գումարները:

Համայնքի եկամտային ունակությունը հաշվարկվում է՝

$$ԵՈՒ_i = ՀՀ_i + ԳՀ_i + ՄՀ_i + ՊՏ_i, \text{ որտեղ՝}$$

**ՀՀ<sub>i</sub>** - i-րդ համայնքի հողի հարկն է,

**ԳՀ<sub>i</sub>** - i-րդ համայնքի գույքի հարկն է,

**ՄՀ<sub>i</sub>** - i-րդ համայնքի մասհանվող հարկերն են,

**ՊՏ<sub>i</sub>** - i-րդ համայնքի պետական տուրքերն են:

**Հոդված 10.** Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի հաշվարկման կարգը

Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի վրա ազդող գործոնները բազմազան են: Ծախսային կարիքի գործակիցն ուղղակիորեն կապված է՝

- կիրառվող ծախսային գործոնների տեսակներից և դրանց գործակիցների արժեքից,
- համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցում յուրաքանչյուր ծախսային գործոնի գործակցի (այսուհետ ծախսային գործակից) տեսակարար կշռից (բաժնեմասից):

Հայաստանի Հանրապետության համայնքների և դրանց վերապահված պարտադիր լիազորությունների իրականացման առանձնահատկություններից ելնելով՝ սույն օրենքում կիրառվում են ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի վրա առավել ազդեցություն ունեցող այնպիսի ծախսային գործակիցներ, որոնց վերաբերյալ տվյալները չափելի, մատչելի և հավաստի են: Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված հետևյալ ծախսային գործակիցներով և իրենց համապատասխան տեսակարար կշիռներով՝

1. Մասշտաբի գործակից.
2. Տրանսպորտային մատչելիության գործակից.
3. Համայնքի ծառայությունների որակի գործակից.
4. Համայնքի բարձրադիրության գործակից.
5. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի գործակից.
6. Բնակչության տարիքային կառուցվածքի գործակից:

Համայնքի ծախսային կարիքի գործակիցը հաշվարկվում է՝

$$\bar{\sigma}_{\sigma_i} = \sum y_n \times \sigma_{\sigma_n}, \text{ որտեղ՝}$$

- $\bar{\sigma}_{\sigma_i}$  - i-րդ համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցն է,  
 $y_n$  - i-րդ համայնքի n-րդ ծախսային գործակցի տեսակարար կշիռն է,  
 $\sigma_{\sigma_n}$  - i-րդ համայնքի n-րդ ծախսային գործակցի արժեքն է:

**Հոդված 11.** Մասշտաբի ծախսային գործակցի հաշվարկման կարգը

Մասշտաբի ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման մեկ շնչին ընկնող ծախսերի վրա համայնքի բնակչության թվաքանակի ազդեցությունն է:

Մասշտաբի գործակիցը հաշվարկվում է՝

$$U_{\sigma_i} = (0,2 \times \rho_i + 0,8 \times \rho_{\text{միջ}}) / \rho_i, \text{ որտեղ՝}$$

- $U_{\sigma_i}$  - i-րդ համայնքի մասշտաբի գործակիցն է,  
 $\rho_i$  - i-րդ համայնքի բնակչության թիվն է,  
 $\rho_{\text{միջ}}$  - ՀՀ մեկ համայնքում բնակվող բնակչության միջին թիվն է,

$$\rho_{\text{միջ}} = \rho_{\text{ՀՀ}} / \text{ՀՀ}, \text{ որտեղ՝}$$

$\rho_{\text{ՀՀ}}$  - Բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ),

$\text{ՀՀ}$  - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է:

**Հոդված 12.** Տրանսպորտային մատչելիության ծախսային գործակցի հաշվարկման կարգը

Տրանսպորտային մատչելիության ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա նախկին շրջկենտրոնից, մարզկենտրոնից և Երևանից համայնքի հեռավորության ազդեցությունն է:

Տրանսպորտային մատչելիության գործակիցը հաշվարկվում է՝

$$SUQ^i = 1 + (0,1 \times \sum_i U_{այր} + 0,3 \times \sum_i U_{արգ} + 0,6 \times \sum_i S_{արա}) / (0,1 \times \sum_{միջ} U_{այր} + 0,3 \times \sum_{միջ} U_{արգ} + 0,6 \times \sum_{միջ} S_{արա}), \text{ որտեղ`}$$

$SUQ^i$  - i-րդ համայնքի տրանսպորտային մատչելիության գործակիցն է,

$\sum_i U_{այր}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է մայրաքաղաքից,

$\sum_i U_{արգ}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է մարզկենտրոնից,

$\sum_i S_{արա}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է նախկին շրջկենտրոնից,

$\sum_{միջ} U_{այր}$  - համայնքների միջին հեռավորությունն է մայրաքաղաքից,

$$\sum_{միջ} U_{արգ} = \sum \sum_i U_{այր} / \sum \sum \sum, \text{ որտեղ`}$$

$\sum \sum_i U_{այր}$  - ՀՀ բոլոր համայնքների` մայրաքաղաքից ունեցած

հեռավորությունների հանրագումարն է,

$\sum \sum \sum$  - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է,

$\sum_{միջ} U_{արգ}$  - համայնքների միջին հեռավորությունն է մարզկենտրոնից,

$$\sum_{միջ} U_{արգ} = \sum \sum_i U_{արգ} / \sum \sum \sum, \text{ որտեղ`}$$

$\sum \sum_i U_{արգ}$  - ՀՀ բոլոր համայնքների` իրենց մարզի մարզկենտրոնից

ունեցած հեռավորությունների հանրագումարն է,

$\sum \sum \sum$  - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է,

$\sum_{միջ} S_{արա}$  - համայնքների միջին հեռավորությունն է իրենց նախկին շրջկենտրոնից,

$$\sum_{միջ} S_{արա} = \sum \sum_i S_{արա} / \sum \sum \sum, \text{ որտեղ`}$$

$\sum \sum_i S_{արա}$  - ՀՀ բոլոր համայնքների` իրենց նախկին շրջկենտրոնից

հեռավորությունների հանրագումարն է,

$\sum \sum \sum$  - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է:

**Հոդված 13.** Համայնքի ծառայությունների որակի ծախսային գործակցի հաշվարկման կարգը

Համայնքի ծառայության որակի ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի ծառայությունների որակի ազդեցությունն է:

Համայնքի ծառայության որակի գործակիցը հաշվարկվում է՝

$$\bar{\delta}nq^i = q^{\delta n}_i, \text{ որտեղ՝}$$

$\bar{\delta}nq^i$  - i-րդ համայնքի ծառայությունների որակի գործակիցն է,

$q^{\delta n}_i$  - i-րդ համայնքի ծառայությունների որակի գործակցի արժեքն է:

Համայնքների ծառայությունների որակի գործակիցը պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ տարբերակված պահանջներով՝ ելնելով համայնքի կարգավիճակից, մասնավորապես՝ մայրաքաղաքի թաղային, մարզկենտրոնային, քաղաքային, առողջարանային և զբոսաշրջության, գյուղական և այլ համայնքներ:

Համայնքները բաժանված են երեք խմբերի՝ իրենց համապատասխան ծառայությունների որակի գործակիցների՝

1.  $q^{\delta n} = 1.25$  գործակցով համայնքներ, որոնց ցանկը հաստատվում է կառավարության որոշմամբ,
2.  $q^{\delta n} = 1.1$  գործակցով թաղային և քաղաքային համայնքները, բացառությամբ առաջին խմբում ընդգրկվածների,
3.  $q^{\delta n} = 1.0$  գործակցով բոլոր համայնքները, բացառությամբ առաջին և երկրորդ խմբերում ընդգրկվածների:

#### **Հոդված 14.** Համայնքի բարձրադիտության ծախսային գործակցի հաշվարկման կարգը

Համայնքի բարձրադիտության ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բարձրադիտության ազդեցությունն է:

Համայնքի բարձրադիտության գործակիցը հաշվարկվում է՝

$$Pq^i = q^{P}_i, \text{ որտեղ՝}$$

$Pq^i$  - i-րդ համայնքի բարձրադիտության գործակիցն է,

$q^{P}_i$  - i-րդ համայնքի բարձրադիտության գործակցի արժեքն է:

Համայնքները բաժանված են երեք խմբերի՝ իրենց համապատասխան բարձրադիտության գործակիցների՝

1.  $Pq = 1.0$  գործակցով համայնքներ, որոնց բարձրությունը ծովի մակերևույթից մինչև 1700մ. է,
2.  $Pq = 1.2$  գործակցով համայնքներ, որոնց բարձրությունը ծովի մակերևույթից մինչև 1700-2000մ. է,
3.  $Pq = 1.4$  գործակցով համայնքներ, որոնց բարձրությունը ծովի մակերևույթից 2000մ-ից բարձր է:

**Հողված 15.** Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործակցի հաշվարկման կարգը

Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ազդեցությունն է:

Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակիցը հաշվարկվում է՝

$$P_{\text{ՀՀ}}^i = 1 + 0,2(P_{\text{ԲՆԹ}} - 1), \text{ որտեղ՝}$$

$P_{\text{ՀՀ}}^i$  -  $i$ -րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակիցն է,

$P_{\text{ԲՆԹ}}$  -  $i$ -րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի թիվն է:

**Հողված 16.** Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործակցի հաշվարկման կարգը

Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի ազդեցությունն է:

Բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցը հաշվարկվում է՝

$$P_{\text{ՏԿԳ}}^i = (1 + (P_i^{\text{Ե}} + P_i^{\text{Ծ}}) / P_i) / (1 + (P^{\text{Ե}} + P^{\text{Ծ}}) / P_{\text{հհ}}), \text{ որտեղ՝}$$

$P_{\text{ՏԿԳ}}^i$  -  $i$ -րդ համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցն է,

$P_i^{\text{Ե}}$  -  $i$ -րդ համայնքի 0-16 տարեկան բնակչության թիվն է,

$P_i^{\text{Ծ}}$  -  $i$ -րդ համայնքի աշխատունակ տարիքից բարձր բնակչության թիվն է,

$P_i$  -  $i$ -րդ համայնքի բնակչության թիվն է,

$P^{\text{Ե}}$  - ՀՀ 0-16 տարեկան բնակչության թիվն է,

$P^{\text{Ծ}}$  - ՀՀ աշխատունակ տարիքից բարձր բնակչության թիվն է,

$P_{\text{ՀՀ}}$  - ՀՀ բնակչության թիվն է:

**Հողված 17.** Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի հաշվարկման կարգը

Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը հավասար է 25 տոկոս տեսակարար կշռով մասշտաբի, 15 տոկոս տեսակարար կշռով տրանսպորտային մատչելիության, 10 տոկոս տեսակարար կշռով համայնքի ծառայությունների որակի, 15 տոկոս տեսակարար կշռով համայնքի բարձրադիրության, 25 տոկոս տեսակարար կշռով համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի, 10 տոկոս տեսակարար կշռով բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործակիցների հանրագումարին:

Համայնքի ծախսային կարիքի գործակցի հաշվարկման ամփոփ բանաձևն է՝

$$\bar{\delta}y_i = \sum (y_n \times \bar{\delta}y_n)$$

$$\bar{\delta}y_i = y^{UQ} \times UQ_i + y^{SUQ} \times SUQ_i + y^{\bar{O}NQ} \times \bar{O}NQ_i + y^{PQ} \times PQ_i + y^{P\bar{P}Q} \times P\bar{P}Q_i + y^{P\bar{S}yQ} \times P\bar{S}yQ_i$$

$$\bar{\delta}y_i = 0.25 \times UQ_i + 0.15 \times SUQ_i + 0.1 \times \bar{O}NQ_i + 0.15 \times PQ_i + 0.25 \times P\bar{P}Q_i + 0.1 \times P\bar{S}yQ_i$$

**Հոդված 18.** Համահարթեցման դոտացիաների հաշվարկման հիմքում դրվող գործոնները

Համահարթեցման դոտացիաները հաշվարկվում են՝ ըստ առանձին համայնքների բյուջեների:

Համահարթեցման դոտացիաները հատկացվում են երկու սկզբունքով՝

1. Բնակչությանը փոքր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կենսագործունեության նվազագույն ծախսերի ապահովում (այսուհետ «ա» գործոն)։
2. Համայնքների մեկ շնչին ընկնող բյուջետային միջոցների անհավասարաչափ բաշխման մեղմացում (այսուհետ՝ «բ» գործոն)՝

“ա” գործոն - դոտացիաների բաշխում՝ ըստ համայնքի մասշտաբի գործակցի -  $\eta^U$ ,

“բ” գործոն - դոտացիաների բաշխում՝ ըստ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի -  $\eta^{P\bar{U}}$ ։

**Հոդված 19.** Համահարթեցման դոտացիաների՝ ըստ մասշտաբի գործակցի հաշվարկման կարգը

Սույն օրենքի «ա» գործոնով համահարթեցման դոտացիաների բաշխումն իրականացվում է ըստ մասշտաբի գործակցի այն համայնքների միջև, որոնց մասշտաբի գործակիցը բարձր է բոլոր համայնքների մասշտաբի գործակցի միջին ցուցանիշից, որը հավասար է 1,0-ի:

Համահարթեցման դոտացիաների «ա» գործոնով բաշխման նպատակն է՝ ապահովել համայնքի կենսագործունեության նվազագույն ծախսերը:

1. Ըստ մասշտաբի գործակցի համայնքի բյուջեի համալրումը համապատասխանում է համայնքի ծախսերի նվազագույն չափն ապահովելու համար, որը գնահատվել է

$$\eta_{\text{նվազ}}^{\text{մասշ}} = \eta_i^{\text{մասշ}} = 2.2 \text{ մլն. դրամ:}$$

2. Ըստ մասշտաբի գործակցի համահարթեցման դոտացիաներ ստանում են այն համայնքները, որոնց մասշտաբի գործակիցը միջին հանրապետական գործակցից բարձր է:
3. Ըստ համայնքի մասշտաբի գործակցի համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի հաշվարկման բանաձևն է.

$$Q_U = Q_i \text{մասշ} \times \text{ՀԹմասշ} , \text{ որտեղ`}$$

**Q<sub>U</sub>** - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի գումարն է,

**Q<sub>i</sub>մասշ** - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող մեկ համայնքի դոտացիայի չափն է,

**ՀԹմասշ** - ըստ մասշտաբի գործակցի դոտացիա ստացող համայնքների թիվն է:

Մասշտաբի գործակցով համայնքի դոտացիա ստանալը չի բացառում, նույն համայնքին` ըստ բյուջետային ապահովվածության գործակցի դոտացիա ստանալն: Ըստ մասշտաբի գործակցի «ա» գործոնով հատկացվող ֆինանսական միջոցները հաշվի են առնվում նույն համայնքների նոր բյուջետային ունակության գործակցի հաշվարկման համար:

**Հոդված 20.** Համահարթեցման դոտացիայի «բ» գործոնով բաշխումն ըստ բյուջետային ապահովվածության գործակցի

Համահարթեցման դոտացիաներ ըստ համայնքների բյուջետային ապահովվածության գործակցի ստանում են բոլոր այն համայնքները, որոնց բյուջետային ապահովվածության գործակիցը, ներառյալ «ա» գործոնով հատկացված դոտացիան, փոքր է բյուջետային ապահովվածության սույն օրենքով սահմանված մակարդակի ցուցանիշից:

1. Ըստ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի, համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարը ("բ" գործոն) հաշվարկվում է`

$$Q_{\text{բԱ}} = Q - Q_U , \text{ որտեղ`}$$

**Q<sub>բԱ</sub>** - «բ» գործոնով, ըստ բյուջետային ապահովվածության գործակցի բաշխվող դոտացիայի գումարն է,

**Q** - համահարթեցման համար նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարն է,

**Q<sub>U</sub>** - «ա» գործոնով ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի գումարն է:

2. Ըստ բյուջետային ապահովվածության գործակցի` «բ» գործոն, դոտացիայի բաշխումն իրականացվում է համայնքի եկամտային ունակության և ծախսային կարիքի գործակցի հարաբերության ցուցանիշին համապատասխան: Այդ ցուցանիշը հաշվարկվում է` հաշվի առնելով համայնքներին ըստ մասշտաբի



գործակց «ա» գործոնով հատկացված դոտացիաները որպես եկամուտ: Համայնքի նոր եկամտային ունակության գործակիցը հաշվարկվում է՝

$$\text{ԵՈՒԳ}_i^{\text{Ա}} = [(\text{ԵՈՒ}_i + \text{Դ}_i^{\text{մասշ}}) / \text{Բ}_i] / [(\text{ԵՈՒ} + \text{Դ}^{\text{Մ}}) / \text{Բ}] , \text{ որտեղ՝}$$

**ԵՈՒԳ<sub>i</sub><sup>Ա</sup>** - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է՝ «ա» գործոնով դոտացիայի բաշխումից հետո,

**ԵՈՒ<sub>i</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակությունն է մինչև «ա» գործոնով դոտացիայի բաշխումը,

**Բ<sub>i</sub>** - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

**ԵՈՒ** - բոլոր համայնքների եկամտային ունակության հանրագումարն է՝ մինչև «ա» գործոնով դոտացիայի բաշխումը,

**Դ<sub>i</sub><sup>մասշ</sup>** - «ա» գործոնով ըստ մասշտաբի գործակցի բաշխվող՝ յուրաքանչյուր համայնքի դոտացիայի չափն է,

**Դ<sup>Մ</sup>** - «ա» գործոնով ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի ընդհանուր գումարն է,

**Բ ՅՅ** - ՅՅ բնակչության թիվն է:

3. «ա» գործոնով դոտացիայի բաշխման արդյունքում համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի հաշվարկման բանաձևն է՝

$$\text{ԲԱԳ}_i^{\text{Ա}} = \text{ԵՈՒԳ}_i / \text{ԾԿԳ}_i, \text{ որտեղ՝}$$

**ԲԱԳ<sub>i</sub><sup>Ա</sup>** - i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցն է՝ «ա» գործոնով դոտացիայի բաշխումից հետո,

**ԵՈՒԳ<sub>i</sub><sup>Ա</sup>** - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է՝ «ա» գործոնով դոտացիայի բաշխումից հետո,

**ԾԿԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցն է:

Ըստ բյուջետային ապահովվածության գործակցի համահարթեցման դոտացիաների հաշվարկման համար համայնքների բյուջետային ապահովվածության գործակիցները «նորմավորվում» են հետևյալ բանաձևով՝

$$\frac{\Sigma \text{ԲԱԳ}_i^{\text{Ա}} \cdot \text{Բ}_i}{\text{Բ}_i} = 1 :$$

4. Ըստ բյուջետային ապահովվածության գործակցի՝ "բ" գործոնով դոտացիաներ են ստանում այն համայնքները, որոնց բյուջետային ապահովվածության գործակիցը սույն օրենքով սահմանված համահարթեցման սահմանային մակարդակի արժեքից ցածր է:

Սահմանային մակարդակի արժեքի որոշումը ֆինանսական համահարթեցման քաղաքականության իրականացման հիմնական միջոցն է:

Սույն օրենքով սահմանվում է համահարթեցման սահմանային մակարդակի այնպիսի մեծություն, որ «բ» գործոնով բաշխվող ֆինանսական միջոցները բավարար են լրացնելու դոտացիա ստացող համայնքների բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերության 75 տոկոսը:

Այդ ցուցանիշն ապահովում է համահարթեցման լավագույն է ֆեկտը:

5. Ըստ բյուջետային ապահովվածության գործակցի՝ «բ» գործոնով յուրաքանչյուր համայնքին տրամադրվող համահարթեցման դոտացիան հավասար է յուրաքանչյուր համայնքի բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերության 75 տոկոսին:

Յուրաքանչյուր համայնքի բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած ամբողջ տարբերությունը հաշվարկվում է՝

$$\text{ԳՈՒՄ}_i^{\text{ՀՍՄ}} = (\text{ՀՍՄ} - \text{ԲԱԳ}_i^{\text{Ա}}) \times \text{Բ}_i \times \text{ԾԿԳ}_i \times X, \text{ որտեղ՝}$$

**ԳՈՒՄ}\_i^{\text{ՀՍՄ}}** - i-րդ համայնքի համար անհրաժեշտ գումարի չափն է, որը կբավարարի ամբողջությամբ լրացնելու այդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի և համահարթեցման սահմանային մակարդակի տարբերությունը,

**ՀՍՄ** - համահարթեցման սահմանային մակարդակն է,

**Բ}\_i** - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

**ԾԿԳ}\_i** - i-րդ համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցն է,

**Ե}\_{\text{Միջ}}^{1262}** - մեկ շնչին ընկնող միջին համայնքային եկամուտներն են, ներառյալ «ա» գործոնով տրված դոտացիան:

$$C_{\text{ՄԻՔ}}^{12նչ} = \frac{\sum C_{\text{ՌԻ}} \cdot \Gamma^{\text{Մ}}}{P_{33}}, \text{ որտեղ՝}$$

- C<sub>ՌԻ</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է ,
- Γ<sup>Մ</sup>** - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի ընդհանուր գումարն է,
- P<sub>33</sub>** - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (33 բնակչության թիվ):

6. Համայնքներին «բ» գործոնով տրամադրվող դոտացիաները հաշվարկվում են՝

$$\Gamma_i^{\text{ԲԱ}} = \text{ԳՈՒՄ}_i^{\text{ՀՍՄ}} \times \text{Գ}_i^{\text{ԼՐԱ}}, \text{ որտեղ՝}$$

- Γ<sub>i</sub><sup>ԲԱ</sup>** - i-րդ համայնքին «բ» գործոնով տրվող դոտացիայի գումարն է,
- ԳՈՒՄ<sub>i</sub><sup>ՀՍՄ</sup>** - i-րդ համայնքի համար անհրաժեշտ գումարի չափն է, որը կբավարարի ամբողջությամբ լրացնելու այդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի և համահարթեցման սահմանային մակարդակի տարբերությունը,

$$\text{Գ}_i^{\text{ԼՐԱ}} = \Gamma^{\text{ԲԱ}} / \text{պ } \text{ԳՈՒՄ}_i^{\text{ՀՍՄ}}$$

**Γ<sup>ԲԱ</sup>** - ըստ բյուջետային ապահովվածության գործակցի բաշխվող դոտացիայի ընդհանուր գումարն է:

Սույն օրենքով **Գ<sub>ԼՐԱ</sub>** «բ» գործոնով տրվող դոտացիայի ընդհանուր գումարի տեսակարար կշիռն է՝ բոլոր համայնքների բյուջետային ապահովվածության գործակիցների և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերություններին համապատասխանող միջոցների հանրագումարում:

### **Հոդված 21. Դոտացիաների հատկացման կարգը**

Համայնքներին հատկացվող համահարթեցման դոտացիաները ամրագրվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքում: Դոտացիաները համայնքներին հատկացնում է Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը:

Համայնքների կողմից ձևավորված ոչ կառավարական մարմիններին իրավունք է վերապահվում մասնակցելու ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկմանը:

Տեղական ինքնակառավարման մարմինները իրենց համայնքներին հատկացված համահարթեցման դոտացիայի գումարի չափը կարող են վիճարկել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնում և դատարանում:

Համայնքների համահարթեցման դոտացիաները հատկացվում են հավասար

չափաբաժիններով յուրաքանչյուր անսվա վերջում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան գանձապետական բաժանմունքների՝ յուրաքանչյուր համայնքի համար բացված գանձապետական հաշիվների միջոցով:

**Հոդված 22.** Անցումային դրույթներ

Սույն օրենքով սահմանված չափորոշիչների և գործակիցների տնտեսական հիմնավորումները և համահարթեցման դոտացիաների հաշվարկման համակարգչային հաշվիչը ներկայացված են ֆինանսական համահարթեցման մեթոդաբանությունում:

**Հոդված 23.** Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: